Azg
armenian daily
10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1998 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 229 (1733)

Սուրեն Հարությունյանը ԱՊՀ-ում ՀՀ ներկայացուցիչ եւ Մինսկում դեսպան

Ամենայն հավանականությամբ շուտով իրականություն կդառնան Սուրեն Հարությունյանի հայկական դիվանագիտական ոլորտում աշխատելու մասին մեր մամուլում ստեղ-ստեղ արտահայտվող ենթադրությունները: Ոչ պաշտոնական աղբյուրներից «Ազգին» հայտնի դարձավ, որ Հայաստանի Հանրապետության նախագահը Խ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախկին (1988-1990 թթ.) առաջին քարտուղարին առաջարկել է զբաղեցնել միանգամայն երկու պաշտոն՝ ԱՊՀ երկրներում Հայաստանի ներկայացուցիչ՝ նախարարի կարգավիճակով, եւ Բելառուսում ՀՀ դեսպան: Երկու պարագայում էլ նստավայրը Մինսկ: Ըստ միեւնույն աղբյուրների, առաջարկն ընդունվել է: Սուրեն Հարությունյանը 1991 թ.-ից մինչեւ օրս աշխատում է Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարության համակարգում: Այդ նախարարությունում նա զբաղեցնում է տեղական ինքնակառավարման մարմինների միջազգային կապերը համակարգողի պաշտոնը:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բյուջեի չընդունումը համարում եմ բացասական, բայց ոչ ճակատագրական

Արտահերթ նստաշրջանի նախաշեմին գնահատեց վարչապետը

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

1999 թ. պետբյուջեի մասին օրենքի ողիսականն առայժմ մրկալի է: Փարոսը նախագահի հրամանագրով գումարվելիք արտահերթ նստաշրջանն է. խնդրի ԱԺ-ն ավարտեց իր կանոնակարգային առաքելությունը. երեկ ԱԺ 8-րդ նստաշրջանը եզրափակվեց խորհրդարան-կառավարություն խորհրդանշական հարցուրտասխանով: Ավարտից հետո վարչապետ Արմեն Դարբինյանը խիզախ մոտեցավ իրեն սպասող լրագրողներին դառնալով հարցերի թիրախ:

- Գոհ կամ դժգոհ երեւի ճիշտ չէ ասելը, որովհետեւ աշխատանքային գործընթաց է: Ըստ էության քննարկումը դեռ չի սկսվել: ԱԺ-ում ավարտվեց հարցուրտասխանը: Իհարկե, ԱԺ հանձնաժողովներում հնչած առաջարկությունները որոշակի մտորումների տեղիք են տվել, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունն աշխատում է: Բացի այդ, դեկտեմբերի 11-ին տեղի ունենալիք դոնոր երկրների հանդիպման ժամանակ, կարծում եմ, վերջնականապես կիստակեցվի այն օժանդակության ընդհանուր ծավալը, որը կհատկացվի Հայաստանին: Դրանից հետո արդեն բյուջեի վերջնական տարբերակը կներկայացվի ԱԺ եւ արտահերթ նստաշրջանում կդրվի քվեարկության:

- Դուք ակնկալո՞ւմ եք «Երկրապահի» աջակցությունը եւ պատրա՞ստ եք բյուջեում արտացոլելու նրանց առաջարկությունները, ի մասնավորի՝ ծախսային եւ եկամտային մասերի կառուցվածքային փոփոխությունները:

- Մենք ակնկալում ենք բոլոր ողջամիտ պատգամավորների աջակցությունը, ինչ վերաբերում է առաջարկներին, արդա եւ «Երկրապահի», եւ այլ խումբ-խմբակցությունների ու պատգամավորների կողմից դրանք եղել են, այժմ կառավարությունը քննարկում է առաջարկները, եթե մեր ֆինանսական հնարավորությունները ներեն, արդա կբավարարվեն, եթե ոչ, չեն բավարարվի:

- Ինչպե՞ս եք վերաբերվում այն պնդմանը, թե բյուջեի քննարկման ավարտը ճակատագրական կլինի Ձեզ համար:

- Քննարկումների ավարտը ոչ մեկի համար ճակատագրական լինել չի կարող, իսկ բյուջեի չընդունելը ընդհանրապես համարում եմ բացասական երկրի կայունացման այս գործընթացի տեսանկյունից:

- Եթե բյուջեն չընդունվի, Դուք կդնե՞ք Ձեր եւ կառավարության վստահության հարցը՝ համաձայն Սահմանադրության 74-րդ հոդվածի:

- Եկեք տեսնենք՝ ինչպե՞ս է ընթանալու քննարկումը, այնուհետեւ կորոշենք:

- Այսօր խոսվում է ուժային նախարարների եւ նախագահի կողմից նոր վարչապետի հավանական թեկնածուների որոնման մասին, ինչպե՞ս եք գնահատում այդ փաստը:

- Այդպիսի լուրեր տարածողները թող իրենք մտածեն, ես ոչ մի կերպ չեմ վերաբերվում:

ՇՇՈՒԿՆԵՐ

Վարդգես Արծրունին նախագահին հանդիպել է 2-3 րոպե

«Ազգին» պարզաբանեց Գագիկ Մարտիրոսյանը

Քաղաքական շրջանակներում եւ մամուլում արդեն հիշատակվում է նոր վարչապետի մի քանի թեկնածություն: Բացի Սենիկ Գեւորգյանից նշվում է Պետճինի նախկին նախագահ, այսօր Մոսկվայում շինարարական ընկերության ղեկավար Վարդգես Արծրունու անունը՝ իբրեւ նախագահ Ռոբերտ Քոչարյանի համար առավել ընդունելի: Հիշեցնենք, որ Վարդգես Արծրունին եղել է նաեւ Վազգեն Մանուկյանի կառավարության անդամ, 1990-ին նա հեռացել է Հայաստանի իշխանական կառույցներից՝ հաստատվելով Մոսկվայում, սակայն չխզելով կապերը երկրի, առավել եւս իշխանության տարբեր օղակների հետ: «Ազգը» դիմեց արտադրական ենթակառուցվածքների գծով համակարգող նախարար Գագիկ Մարտիրոսյանին՝ իբրեւ առավել հաջիրազեկ աղբյուրի՝ պարզաբանման ակնկալիքով:

- Այդ բոլոր խոսակցությունները հիմքից զուրկ են: Կառավարությունն ու վարչապետը կայուն եւ ամուր վիճակով աշխատել ու աշխատում են: Նոր վարչապետների կարիք չունենք: Ձեր նշած անձանց ես, իհարկե, ճանաչում եմ: Բայց կառավարությունը վարչապետ ընտրելու այդպիսի խնդիր չունի: Ինչ վերաբերում է Վարդգես Արծրունուն, ապա նա հանդիպել է նախագահի հետ ընդամենը 2-3 րոպե, հանդիպմանը ես ներկա եմ եղել կառավարության կողմից, եւ խոսվել է աղետի գոտու տասնամյակի հետ կապված՝ հաշվի առնելով այն, որ Արծրունին ժամանակին մեծ մասնակցություն է ունեցել աղետի հետեւանքների վերացմանը: Այո՛, ես եղել եմ Արծրունու տեղակալը 1,5 տարի, իսկ այնուհետեւ փոխարինել եմ նրան՝ որպես շինարարության նախարար:

Ն. Դ.

Հայաստանը կամուրջ՝ արաբական աշխարհի եւ ԱՊՀ-ի միջեւ

Սիրիա-Հայաստան միջկառավարական համատեղ հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով Երեւանում են գտնվում Սիրիայի Արաբական Հանրապետության էկոնոմիկայի եւ արտաքին առեւտրի նախարար Մուհամեդ Ալ Իմադին եւ մթերումների ու ներքին առեւտրի նախարար Նադիմ Մաալին: Երեկ նրանց ընդունեց վարչապետ Արմեն Դարբինյանը, որը Հայաստանն արաբական աշխարհի համար որպես ԱՊՀ երկրներ դուրս գալու կամուրջ դիտարկելու գաղափարի իրականացումը կարեւոր նկատեց բոլոր մասնակից կողմերի շահերի համար եւ հավաստիացրեց, որ Հայաստանում առկա է համաձայնեցված գործարար ներուժ:

Սիրիական պատվիրակությանն ավելի ուշ ընդունեց նաեւ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որի կարծիքով, երկու երկրների քաղաքական հարաբերությունների մակարդակը բավական բարձր է, որը չի կարելի ասել, սակայն, տնտեսական համագործակցության մասին: Ըստ ՀՀ նախագահի, անհրաժեշտ է այդ հարաբերությունները պետական մակարդակից իջեցնել մինչեւ գործարար կապերը՝ առաջին հերթին համաձայնեցնելով երկու երկրների առեւտրային ռեժիմները եւ նպաստավոր պայմաններ ստեղծելով բիզնեսի զարգացման համար:

Մուհամեդ Ալ Իմադին հավաստեց իր երկրի պատրաստակամությունն ընդլայնելու համագործակցության շրջանակները եւ կարեւորեց բանկային, էներգետիկայի, գյուղատնտեսության բնագավառներում համատեղ ծրագրերի իրականացումը, փոխադարձ ներդրումների խրախուսումը: Սիրիայի նախարարը բարձր գնահատեց սիրիահայերի դերը երկրի տնտեսական կյանքում:

Նույնպես երեկ, սիրիական պատվիրակության անդամներին ընդունեց նաեւ ՀՀ գյուղատնտեսության նախարար Վլ. Մովսիսյանը:

Այսօր, հինգշաբթի, պաշտոնական բացումը տեղի կունենա Երեւանում Սիրիայի դեսպանատան վերանորոգված շենքի՝ մասնակցությամբ պատվիրակության անդամների:



Էջեւիթը չի կարողանում կազմավորել Թուրքիայի 56-րդ կառավարությունը

ՍՏԱՄԲՈՒԼ, 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Թուրքական մամուլը գրում է, որ փոխվարչապետ Բյուլենթ Էջեւիթը, որին հանձնարարվել է նոր կառավարությունը կազմելու դժվարին պարտականությունը, հույս չունի, թե այն կարող է կատարել եւ այդ մասին իր տպավորությունն է փոխանցել վարչապետ Յըլմազին, որի հետ մեկնում էր Ադանա՝ երկրաշարժի հետեւանքների վերացման եւ 5000 բնակարանների կառուցման ծրագրի հաստատման նպատակով:

Էջեւիթը Յըլմազին ասել է, թե վստահ է, որ Չիլլերի հետ բանակցությունները արդյունքի չեն հանգեցնի, իսկ ինքը որեւէ նոր ծրագիր չունի: Վարչապետը կտրուկ պատասխան է տվել, թե «այդ դեպքում հանրապետության նախագահը կանի այն, ինչ որ պետք է անի»: Այսինքն, նախագահն իր ուզած ձեւով կձեւավորի անցումային կառավարություն, որը կգործի մինչեւ նոր ընտրությունները: Էջեւիթի հոռետեսությունն անհիմն չէր: Չիլլերի ղեկավարած «ճշմարիտ ուղին» մերժել է Յըլմազի կուսակցության եւ Էջեւիթի սոցիալ-դեմոկրատների հետ կառավարություն կազմելու առաջարկը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Թուրքերը երկյուղում են Սեւրի պայմանագրի վերակենդանացումից

ԵՐԵՎԱՆ, 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Օջալանի առնչությամբ թուրքերը վերհիշել են իրենց համար աստելի Սեւրի դաշնագիրը, նշում է «Նյու Յորք թայմս»-ը՝ տեղեկացնելով, որ համաձայն այդ փաստաթղթի, Թուրքիայի ամենաբերրի ու կարեւոր հատվածները բաժանվելու էին Հունաստանի, Իտալիայի, Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ, Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները դրվելու էին միջազգային հսկողության տակ, իսկ Թուրքիայի մնալու էին միայն Անկարան ու շրջակա տարածքները:

Լոզանի պայմանագիրը վերացրեց Սեւրի դաշնագիրը, սակայն թուրքերը մինչեւ այժմ էլ վախենում են Սեւրից: «Եվրոպական շատ երկրներ ցանկանում են վերակենդանացնել Սեւրի պայմանագիրը, բայց դա նրանց չի հաջողվի», ասել է Յըլմազը: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, սկզբում թուրքերը ոգեւորված էին եվրոպայում Օջալանի ձերբակալմամբ, բայց այժմ հասկացել են, որ քրդական խնդիրը միջազգային ասպարեզ է դուրս գալիս, եւ դա թուրքերը համարում են Թուրքիայի դեմ եվրոպայի կողմից կազմակերպված դավադրություն՝ Սեւրի պայմանագիրը վերակենդանացնելու համար:

Ըստ ռադիոկայանի, Իտալիան բացահայտ պաշտպանում է քրդական հարցը, իսկ Ֆրանսիայի նախկին նախագահ Միտերանի այրին ասել է. «Ինչ կարող էր անել Օջալանը, եթե պարբերաբար կոտորում էին իր ժողովրդին: Դատարանի առջեւ Օջալանի հետ մեկտեղ պետք է կանգնեն նաեւ թուրք գեներալները»:

Հռոմի կարդինալներից մեկն ասել է. «Եթե այդման շատ մարդ է գնում Օջալանի հետեւից, ուրեմն նա ահաբեկիչ չէ: Սա արդեն եվրոպական խնդիր է»: Եվրախորհրդարանի անդամները կոչ են արել քրդական հարցով միջազգային համաժողով հրավիրել, իսկ Իտալիան ու Գերմանիան առաջարկում են Օջալանին դատել միջազգային դատարանում, բայց Թուրքիան երկու դեպքում էլ դեմ է՝ վախենալով, որ կքննարկվի քրդերի դեմ Թուրքիայի վարած քաղաքականությունը:

Թուրքիայում բողոքի ցույցերի ժամանակ կիրառվող «Թուրքիան երբեք չի մասնատվի», «Ոչ» Սեւրի պայմանագրին» կարգախոսները վկայում են, որ իրենց տարածքում որեւէ ինքնավարություն չհանդուրժող թուրքերը ընկել են հոգեկան ապրումների մեջ, եզրակացնում է «Ազատությունը»:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7

Տարելիցի կապակցությամբ

Երկրաշարժի 10-րդ տարելիցի օրը՝ դեկտեմբերի 7-ին, Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության ներկայացուցիչներն այցելեցին աղետի գոտի, մասնավորապես Գյումրի եւ Վանաձոր: Գյումրի էին մեկնել ՀՌԱԿ Հանրապետական վարչության փոխատենապետ Համլետ Դալլաքյանը, ՀՎ անդամներ Հրայր Կարապետյանը, որոնց տեղում միացավ Անտոն Փիլոյանը: Նրանք հանդիպեցին ՀՌԱԿ ակումբների անդամներին ու համակիրներին, նրանց հետ այցելեցին երկրաշարժի զոհերին նվիրված հուշահամալիրը եւ նահատակների շիրիմները՝ ծաղկեպսակներով ու մեկ րոպե լռությամբ հարգելով անմեղ զոհերի հիշատակը, մասնակցեցին եկեղեցում տրվող սուրբ պատարագին:

Նույնոիսի միջոցառումների մասնակցեց նաեւ Վանաձոր մեկնած պատվիրակությունը, որի կազմում էին ՀՌԱԿ ՀՎ անդամներ Ատոմ Ադամյանը, Հարություն Սաֆելյանը, ՀՌԱԿ Կարգապահական ատյանի նախագահ Կառլեն Գեւորգյանը, Կենտրոնական գրասենյակի գործիչ Գրիգոր Պետրոսյանը:

ՀՌԱԿ-ի եւ մեկ նորաստեղծ ակումբ Երեբունի համայնքում

Դեկտեմբերի 9-ին Երեւան քաղաքի Երեբունի համայնքում տեղի ունեցավ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության մի խումբ նորագիրների հիմնադիր ժողովը, որը հիմնեց ակումբ եւ պայմանականորեն անվանակոչեց «Երեբունի»: Այնուհետեւ ՀՌԱԿ նորաստեղծ ակումբի անդամները անցկացրին ակումբի վարչության ընտրություններ: Կանոնադրությանը համաձայն, անցկացված քվեարկության արդյունքով, ձայների մեծամասնությամբ ակումբի ատենապետ ընտրվեց Սուսաննա Ստեփանյանը, փոխատենապետ՝ Հասմիկ Պետրոսյանը:

ՀՌԱԿ ՀՎ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

Փոստային ծառայությունը մարզային կառույցով

Տարիներ առաջ մեր կյանքից գրեթե դուրս մնացած փոստային ծառայությունները բնակչության կենցաղում հետզհետե նորից տեղ են գտնում նաեւ Շիրակում: Այսօր մարզում գործող թվով 105 փոստային բաժանմունքները մի շարք ինչպես ավանդական, այնպես էլ նոր ծառայություններ են առաջարկում, թեեւ նրանց աշխատանքի հիմնական բովանդակությունն առայժմ կազմում են կենսաթոշակների եւ նպաստների վճարումները ու քաղաքացիներից գանձվող վճարների ընդունումը: Այստեղ հոկտեմբերի 1-ից խնայբանկերում եւ կարի բաժանմունքներում էլեկտրաէներգիայի վարձերի ընդունմանն անցնելը համընկավ «Հայփոստի» մարզային կառույցի ստեղծմանը: Ինչպես վերջերս տեղեկացրեց «Շիրակի փոստատուն» պետական դուստր ՓԲԸ-ն տնօրեն Հենրիկ Պողոսյանը, անցած ժամանակամիջոցում մարզկենտրոն Գյումրիի 19 փոստային բաժանմունքների թիվն ավելացել է 6-ով: Նոր փոստատներ են բացվել նախկինում այդպիսի չունեցող «Մուշ» նորակառույց, «Նորավան» քաղաքատերում, Մարտական եւ աշխատանքային փառքի հուշահամալիրին («Մայր Հայաստան») եւ քաղաքի օդանավակայանին հարող բնակելի տարածքներում՝ ծառայությունը դրանց բնակչությանը մոտեցնելու եւ նրանց գործը հեշտացնելու նպատակով: Վերջին տարիներին գուցե դանդաղ, այնուամենայնիվ, կատարվում է նաեւ տեխնիկական վերազինում: Մարդկանց տպատարկումն արագացնելու համար քաղաքի առայժմ 13 փոստային բաժանմունքներում տեղադրված են համակարգիչներ, դրանցից 1-ական կա նաեւ մարզի նախկին շրջկենտրոններում:

«Շիրակի փոստատան» տնօրենը տեղեկացրեց, որ այստեղ դեկտեմբերի ընթացքում կկազմակերպվի նաեւ ծախսված բնական գազի դիմաց բնակչությունից վճարների ընդունումը: Պրն Պողոսյանի հավաստմամբ, փոստային բաժանմունքները դրան եւս պատրաստ են:

Գ. Մ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ո՞վ կհայտնվի նաղդասակի անդամատվաբեր կարգավիճակում

ԱԺ 8-րդ նստաշրջանն ավարտվեց դեպի արտահերթ

Չորեքշաբթի տեղի ունեցավ կառավարության եւ խորհրդարանի վերջին հարցուպատասխանը: Իսկ դրանից առաջ ԱԺ-ն անորոշ ճակատագրով հետաձգեց 99 թ. պետբյուջեի կառավարության նախագծի քվեարկությունը: ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանի ելույթը վերջինն էր այս շարքում: Պատգամավորական քվորումի ակնհայտ բացակայությունը եւ բյուջեի հանդեպ անբարյացակամ տրամադրությունները պատճառ դարձան, որ ոչ նիստը վարող փոխխոսնակ Ալբերտ Բազեյանը, ոչ էլ խոսնակ Խոսրով Հարությունյանը քվեարկության չդնեն արտահերթ նստաշրջան գումարելու կամ հերթական նիստը երկարացնելու առաջարկները:

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդվարդ Սանդոյանին վիճակվեց սիզիֆյան աշխատանք. բյուջեի ներկայացումից հետո նա աննկուն պատասխանեց երկու տասնյակից ավելի պատգամավորների բազմաթիվ հարցերին, իսկ հարցուպատասխանի ժամանակ դարձավ ամբիոնի միակ հերոսը. տարեվերջին Հայաստանում բոլորին հուզում են զուտ ֆինանսական խնդիրներ:

Բյուջեի նախագծում պատգամավորներին ամենից ավելի մտահոգում էր հարկային եկամուտներում դարձյալ անուղղակի հարկերի տեսակարար մեծ կշիռը, որը կարող է հանգեցնել ադրանքային արտադրության կրճատման: Բյուջեի այս տարբերակում հարկային եկամուտների 66 տոկոսն ապահովելու են ավելացած արժեքի հարկը (ԱԱՀ), ակցիզները, ինչպես նաեւ հատատագրված վճարները ու գանձան տուրքերը: Նախատեսված է ԱԱՀ-ի գրեթե 50 տոկոսանոց աճ՝ 98 թ. համեմատությամբ: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդ. Սանդոյանը փորձեց փարատել պատգամավորների մտահոգությունը շեշտելով, որ 99 թ. պետական բյուջեում առաջին անգամ նախատեսված է շահութահարկից սպասվող մուտքերի աճ, որը վկայում է, թե Հայաստանում ձեռնարկությունները եւ բանկային համակարգը սկսել են իրական շահույթներ ստանալ: Ակցիզների գծով նախատեսված է անգամ նվազում 1,2 մլրդ դրամով, 4 մլրդ-ով նվազելու է նաեւ եկամտահարկը: ԱԱՀ-ի աճը Էդվարդ Սանդոյանը համարեց իրատեսական: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը համոզված է, որ 99 թ. տեղի կունենա հարկային բեռի նկատելի թեթեւացում, որը հարկային վարչարարության բարելավման հետ մեկտեղ կհանգեցնի իրենց նախատեսած ՀՆԱ 6 տոկոս աճին: Հարկային տարբեր օրենքներում նոր ընդունվելիք լրացումները, ինչպես նաեւ մաքսատուրքի մասին օրենքը թույլ կտան զարգացնել ներմուծմանը փոխարինող արտադրություններ, որոնք առավել արդյունավետ կդարձնեն պետական ունեցվածքի տնօրինումը:

Ո՞վ է դեմ ազատ, անկախ, միացյալ Հայաստանին

Վերջերս քաղաքական շրջանակներում, իսկ ապա նաեւ մամուլում («Առավոտ» օրաթերթ) հրապարակվեց մի լուր, ըստ որի՝ Ռոբերտ Քոչարյանի ՀՀ նախագահ դառնալուց հետո նվազում է ԼՂ-ին հատկացվող տնտեսական օժանդակությունը: Այս լուրը հերքական օղակն էր այն շղթայի, որը ցնդում է, թե Ռոբերտ Քոչարյանի եւ ԼՂ պատասխանության նախարար Սամվել Բաբայանի միջեւ առկա են հակասություններ, որոնք էլ ուղղակի ազդում են միջպետական հարաբերությունների վրա: Պատգամավոր Էռնեստ Սողոմոնյանը փորձեց պատասխան ստանալ այս տեղեկատվության վերաբերյալ եւ Էդ. Սանդոյանին հարց ուղղեց ինչո՞ւ է ԼՂ-ին հատկացվող միջպետական վարկի գումարը 10 մլրդ-ից նվազել եւ հասել 8 մլրդ-ի: Հայաստանում գրեթե բոլորին հետաքրքրող այս հարցը ՍԴՀԿ նոր ղեկավարը համեմեց Հայ դատի տեսլականով. «Դուք դե՞մ եք ազատ, անկախ, միացյալ Հայաստանին»: Էդ. Սանդոյանը միանշանակ էր. «Կտրականապես մերժում եմ ձեր գնահատականը: Ձեր ասած միտումը բացարձակ բացակայում է եւ ուղղակի հակասում մեր քաղաքականությանը: Մեր նպատակն է ապահովել Լեռնային Ղարաբաղի առաջանցիկ զարգացումը եւ դրա համար ընտրված գործիք է ԼՂ բյուջեի դեֆիցիտի ծածկումը միջպետական վարկի հաշվին: Ընդ որում, զուտ պայմանականորեն է ձեւակերպվում իբրեւ վարկ: Կան այդ վարկի հաշվարկման տարբեր մեթոդներ: Մենք բոլոր քայլերն արել եւ անելու ենք՝ ապահովելու Լեռնային Ղարաբաղի առաջանցիկ տնտեսական զարգացումը»: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը նաեւ ասաց, թե հիշատակվող 10 մլրդ դրամ գումարի ծագումն իրեն հայտնի չէ: Արցախում դեռեւս ավարտված չէ բյուջեի ծրագրման գործընթացը, ուստի եւ չկա վերջնական թիվ: Ամեն օր հայաստանյան եւ արցախյան կառավարությունները բանակցում են, եւ ԼՂ բյուջեի դեֆիցիտի չափերի հայտնի դառնալուց հետո Հայաստանը կհատկացնի հայկական երկրորդ պետականությանն այնքան գումար, որքան անհրաժեշտ է: Ընդ որում, մեր կառավարությունը մտադիր է նաեւ հաշվետվությունների համակարգ, որը կերաշխավորի այդ միջոցների օգտագործման արդյունավետությունը Ղարաբաղում. «Մտավախություն կարող եք չունենալ», ազդարարեց նախարարը:

Կառավարությունը եւ ԱԺ-ն բաժանվեցին միմյանցից՝ թողնելով բազում հարցականներ. խորհրդարանը մեղադրում է կառավարությանն իր լիազորություններն անընդհատ մեծացնելու ձգտման մեջ վկան պատգամավոր Հերմինե Նաղդալյանի վկայակոչած 24 մլրդ դրամի շրջանակներում միջոցների վերաբաշխում կատարելու գործադիր իշխանության որոշումը, որի շնորհիվ կառավարությունը հընթացս կկարողանա այս կամ այն տոկոսով կրճատել կամ ավելացնել բյուջեի եկամտային եւ ծախսային մասը՝ առանց ԱԺ-ի հետ խորհրդակցելու: Բացի այդ՝ գրեթե բոլոր պատգամավորներին անհանգստացնում էր ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդիկան, որովհետեւ վկայակոչվող վարդագույն համախառն ներքին արդյունքը ոչ մի կերպ չէր համընկնում պատգամավորների, ավելի ստույգ՝ նրանց ընտրողների ճանաչած իրականության հետ: Առկախ է մնում նաեւ սվերային տնտեսության կրճատման պարտադրանքը:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԱՔԱՐՅԱՆ

ԿՈՆՅԱԿ-ԲՐԵՆԴԻ

«Պեռնո Ռիկար» ընկերության հետ բավական կոշտ բանակցություններ

ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանը երեկ հայտարարեց, որ ֆրանսիական «Պեռնո Ռիկար» ընկերության հետ մինչեւ վերջին պահը կառավարությունը վարել է բավական կոշտ բանակցություններ: Այսօր այդ բանակցությունները կավարտվեն Երեւանի Կոնյակի գործարանի հիմնական պայմանագիրը լրացնող փաստաթղթի ստորագրմամբ: Տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախարար Վահրամ Ավանեսյանը խորհրդարանում՝ ի պատասխան պատգամավոր Վահագն Խաչատրյանի, պարզաբանեց՝ հայաստանյան շրջանակներին անհանգստացնող լուրը, ըստ որի Կոնյակի գործարանի համար պետբյուջեին հասանելիք 28 մլն դոլարը մնում է «Պեռնո Ռիկար» խմբի ձեռքում, ճիշտ չէ: Վահրամ Ավանեսյանը հավաստեց, որ այդ 28 մլն դոլարը սառեցվում է Միդլենդ բանկի հատուկ հաշվեհամարում՝ մինչեւ 1999 թ. հունիսի 20-ը, իսկ 2 մլն դոլարն արդեն փոխանցված է պետբյուջե: ՀՀ կառավարությունը համաձայնել է հետաձգել Կոնյակի գործարանի գնման իրավունքի ժամկետները՝ ապահովելով Հայաստանի համար ֆինանսական հատակ լրացուցիչ մուտքեր: Գործարքի հետաձգման պատճառով «Պեռնո Ռիկարի» վճարելիք մուտքերի գումարային չափը հայտնի կդառնա այսօր: Վահրամ Ավանեսյանը միանշանակ էր՝ պետբյուջեն 28 մլն դոլարի վնաս չի կրել. «Վնասներ կունենա «Պեռնո Ռիկար» խումբը»: Միաժամանակ, նախարարը հայտնեց, թե ռուսաստանյան ճգնաժամը միակ պատճառը չէ Կոնյակի գործարքի հետաձգման: «Պեռնո Ռիկար» խմբին անհրաժեշտ է վստահություն Հայաստանում իր բիզնեսը ծավալելու եւ ներդրումներ կատարելու հեռանկարում: Ուստի այսօր «Պեռնո Ռիկարը» 9 մլն դոլարի ներդրում է կատարել Կոնյակի գործարանում, ի մասնավորի՝ խաղողի մթերումների եւ խաղողագործության զարգացման համար: Պատգամավոր Վահագն Խաչատրյանի այն պնդմանը, թե այս գործարքում կա անօրինականություն, Վահրամ Ավանեսյանը պատասխանեց. «Եթե կա անօրինականություն՝ դիմեք դատախազություն»:

Ն. Դ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Նյութերը չեն գրախօսվում ու չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻԿ

ԱՍՈՒԼԻՍ

ՀՅԴ-ի կարծիքով բյուջեի նախագիծը հակասում է նախագահի նախընտրական ծրագրին

1995-ին Հայաստանի քաղաքական կյանքը պատուհասած խորհրդարանական ընտրությունների արդյունքում ՀՅԴ-ն ԱԺ-ում ներկայացված լինելով մեն-մի պատգամավորով, երկրի համար առանցքային, ուստիեւ դաշնակցության համար խիստ կարեւոր եկող տարվա բյուջեի վերաբերյալ իր տեսակետները (ծայնը) լսելի դարձնելու համար ստիպված է դիմել լրատվամիջոցների օգնությանը: Ըստ այդմ ՀՅԴ Հայաստանի ԳՄ փոխներկայացուցիչ Արմեն Ռոստամյանը, ԱԺ միակ դաշնակցական պատգամավոր Ռուբեն Հակոբյանը եւ ՔԽ սոցիալ-տնտեսական հանձնախմբի անդամ Թաքուլ Մանասերյանը երեկ ՀՅԴ-ի նոր նստավայր հրավիրված լրագրողներին ներկայացրին ԳՄ վերաբերմունքը ԱԺ ներկայացված «տառապող» բյուջեի վերաբերյալ: Այն է՝ 1999 թ.-ին նախատեսվող բյուջեն որոշ հարցերում հակասում է նախագահի նախընտրական ծրագրին, ցայտուն սոցիալական ուղղվածություն չունի, չի լուծում արդյունաբերական վերագործարկման, ասել է թե՝ նոր աշխատատեղերի ստեղծման, տնտեսության ինքնուրույնացման խնդիրները:

Ռուբեն Հակոբյանի կարծիքով, մասնավորապես, ներկայացված բյուջեն արձանագրում է պետության տնտեսական եւ քաղաքական համակարգերի միջեւ առկա հակասությունը. ազատ տնտեսական հարաբերություններ որդեգրած կառավարության ծրագրերը խոչընդոտվում են իշխանության մենաշնորհների վրա հիմնված, ազատ մրցակցային դաշտը խաթարող «անթափանց» քաղաքական համակարգով: ՀՀ տնտեսական գործընթացների վրա միջազգային կազմակերպությունների ճնշման չափը եւ պահանջները լության են մատնվում, ժողովրդի եւ իշխանության միջեւ անջրպետը խորանում է (պետության խթանման քաղաքականություն չկա: Պրն Մանասերյանի կարծիքով բյուջեն հնարավորինս արագ պետք է մասնագիտական շահագրգիռ եւ հրապարակային քննարկման դրվի՝ լուրջ վերամշակման ենթարկվելով. նախատեսված տարբերակն առայժմ «բանի պետք չէ»: Լուրջ մտահոգություն է հարուցում բյուջեն ավելի շատ վերցնում է, քան տալիս: Չվերահսկվող դրամաշրջառությունը (տարեկան բյուջեի կեսից ավելին մոտ 200 մլն դոլարի համարժեք սպեցիֆիկ շարժ) հսկայական չափերի է հասնում, տնտեսության սպեցիֆիկ հատվածը գրեթե համարժեք է ֆիքսված (լեգալ) հատվածին՝ ըստ էության հաջողությամբ մրցակցելով վերջինիս հետ: Սուր «միկրոտնտեսական աշխարհն», ըստ ԱԺ պատգամավորի, շրջանցում է բյուջեն ծեւականացնելով ծախսերի եւ մուտքերի հաշվեկշիռը, խոչընդոտելով երկրի զարգացմանը նպաստող իրատեսական բյուջեի ծեւավորումը:

Թաքուլ Մանասերյանն իր հերթին շեշտեց ներկայացված բյուջեի սոցիալական շեշտադրումների դեֆիցիտը (անցած տարիների համեմատ առկա առաջխաղացումն անբավարար է, հանգի նախորդ իշխանություններից ժառանգություն մնացած փլուզված տնտեսությունը եւ ժողովրդի համբերության նվաղած «լիմիթն» առավել արմատական քաղաքականություն են պարտադրում, գտնում են ՀՅԴ ներկայացուցիչները), ծախսային մասն անարդյունավետ է, կառավարության ծախսերն ուռճացված, շինարարության խթանման քաղաքականություն չկա: Պրն Մանասերյանի կարծիքով բյուջեն հնարավորինս արագ պետք է մասնագիտական շահագրգիռ եւ հրապարակային քննարկման դրվի՝ լուրջ վերամշակման ենթարկվելով. նախատեսված տարբերակն առայժմ «բանի պետք չէ»: Լուրջ մտահոգություն է հարուցում արտաքին աղբյուրների գերակայությունը 51 մլրդ դրամ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման մեջ (48,3 մլրդ-ը նախատեսվում է ծածկել բացառապես արտաքին ներարկումների միջոցով, ինչը խորացնում է երկրի տնտեսական կախվածությունը միջազգային ֆինանսական հսկաներից):

Մի խոսքով, ինչպես ամփոփեց Արմեն Ռոստոմյանը, ներկայացված բյուջեն չի համապատասխանում նախագահի նախընտրական ծրագրին, եւ դաշնակցությունն, իր սկզբունքներին եւ ժողովրդի շահերին հավատարիմ, մասնակի իշխանության կարգավիճակում շարունակելու է այդ ծրագրերի իրականացմանն աջակցելու հանձնառությունը՝ հարկ եղած դեպքում ընդդիմանալով նախագահի եւ կառավարության նախաձեռնություններին: «Ժողովրդի համբերությունն սպառվել է, ինչը պետք է լուրջ մտահոգության առիթ դառնա նախագահի եւ կառավարության համար», պնդեց ԳՄ փոխներկայացուցիչը հավաստելով, որ բյուջեի բարելավման առաջարկությունների «դաշնակցական» փաթեթն ի վիճակի է կառուցողական հուն ուղղել բյուջեի ընդունումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Կանանց զբաղվածությունն առաջադիմում է... կրիայի քայլերով

Երեկ կառավարական եւ կանանց կազմակերպությունների խորհրդակցական համատեղ նիստ էր հրավիրվել սոցապ նախարարությունում՝ «ՀՀ գենդերային քաղաքականության զարգացման ծրագրի իրականացման» միտումները քննարկելու նպատակով: Ներկա էին նախարար Գագիկ Եգանյանը, կանանց ՀԿ-ների ներկայացուցիչներ եւ լրագրողներ: Միջոցառումն, ըստ ամենայնի, ծրագրված էր իբրեւ միջազգային «Գենդերային գործընթացների» հայաստանյան հերթական դրսեւորումներից մեկը, որ արձանագրվելու էր նախարարության հաշվետվությունում: Սակայն կանանց կազմակերպությունների ներկայացուցիչները գործնական ու մարտական էին տրամադրված եւ կանանց հարցերի լուծման, մասնավորապես գործազրկությունը չափավորելու ռազմավարության ցայտուն մոտեցումներ ու շոշափելի նախաձեռնություններ էին ակնկալում կառավարությունից:

Ըստ այդմ, կասկածի տակ առնելով ՀՀ աշխատանքի եւ զբաղվածության ծառայության պետ Գագիկ Բլեյանի զեկուցման մեջ բերված նախորդ տարիների համեմատ «վարդագույն» տվյալները մասնավորապես կանանց գործազրկության հարաբերական անկման, աշխատանքի տեղավորված գործազուրկների թվի հարաբերական աճի վերաբերյալ, արմատական հարցադրումներ արին. տարեկան 20-30 գործազուրկի հարց լուծելու համար արժե՞ մի ամբողջ ծառայություն պահել, սնկի պես աճող ոչ պետական բուհերը սահմանափակո՞ւմ են կանանց գործազրկությունը, թե պարզապես «օժիտացու» դիպլոմներ են թողարկում, որեւէ բան արվո՞ւմ է աշխատանքի «պրմիտիվ շուկան» բարեփոխելու համար, պետությունն իրական մասնակցություն ունի՞ աշխատատեղերի ստեղծման գործում, թե՞ պարզապես արձանագրում է «իրենց գլխի ճարը տեսած» երջանիկների թիվը եւ այլն:

Անսպասելի «հարձակումն» անակնկալի բերեց ու մի փոքր զայրացրեց պարոն Եգանյանին, որն անտեղի համարեց «գեղեցիկ հռետորական հարցադրումները»: Զբաղվածության ծառայությունը վերահսկում է զբաղվածության օրենքի կատարումը եւ խնդիրների շատ ավելի լայն շրջանակ ունի, քան նշվածը: Ավելի արդյունավետ կլիներ, ըստ նրա, գնահատել գենդերային քաղաքականության մեջ առկա տեղաշարժերը եւ կանանց խնդիրները թեթեւացնելու առաջարկներ ներկայացնել:

Իսկ այդ միտումները, զբաղվածության ծառայության պետի տվյալներով, այսպիսին են: 1998 թ. նոյեմբերին նույն թվականի հունվարի համեմատ աշխատանքի փնտրող չզբաղված քաղաքացիների թիվը կրճատվել է 36,5 հազարով՝ հասնելով 141,5 հազարի, որի 130,8 հազարը պաշտոնապես գործազուրկ են: Գործազրկության մակարդակը կազմել է 8,7 տոկոս՝ հունվարին արձանագրված 2,8 տոկոսի փոխարեն: Գործազուրկների 69,8 տոկոսը կանայք են, որոնց 93,4 տոկոսը՝ քաղաքաբնակ (հիմնական մասը Երեւանից, աղետի գոտուց եւ սահմանամերձ շրջաններից): 2,4 տոկոսն ունի միջնակարգ, 10,7 տոկոսը՝ բարձրագույն կրթություն, 55,5 տոկոսը 30-ից 50 տարեկան է: 1998 թ. անցած ժամանակահատվածում աշխատանքի է տեղավորվել 20 հազար քաղաքացի, որոնցից 12 հազարը կանայք են: 1994-97 թթ. զբաղվածության ծառայության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներում մասնագիտական ուսուցում են անցել 162 գործազուրկ (այդ թվում 103-ը՝ կանայք), մինչդեռ 1998 թ. այդ ցուցանիշը կազմել է 420 (այդ թվում 336-ը՝ կանայք): Վերջիններիս 37 տոկոսն արդեն իսկ տեղավորվել է աշխատանքի, մինչեւ տարեվերջ կվերապատրաստվի եւս 150 գործազուրկ: Ասել է թե՝ զբաղվածության ոլորտում դրական փոփոխություններ առկա են: Այլ հարց է, որ, քննարկման մասնակիցների մեծամասնության կարծիքով, դրանք աննշան են ու լավատեսություն չեն ներշնչում:

Լ. Պ.

Հօգուտ Լիբանան-Հայաստան առեւտրական կապերի զարգացման

Դառնաղեղ երկրաշարժի 10-ամյա տարելիցի կապակցությամբ Հայաստանում է գտնվում Լիբանանցի ու Լիբանանահայ արդյունաբերողների պատվիրակությունը գլխավորությամբ Լիբանանի արդյունաբերողների միության նախագահ Ժակ Սարրաֆի: Հայաստանի ու հայ ժողովրդի ջերմ բարեկամն առաջին անգամ է այցելում Հայաստան: Առիթից օգտվելով հանդիպում ենք «Հրազդան» հյուրանոցում. մեր ընթերցողներին ծանոթ Լիբանանահայ մեծ գործարար Կարոիս Մարգարյանի ուղեկցությամբ:

– Առաջին անգամ եմ լինում այս հարազատ երկրում: Լիբանանյան պատվիրակությամբ մեր հարգանքի տուրքը մատուցեցինք Հայաստանի 1988 թ. ահավոր երկրաշարժի զոհերին: Այդ դժվարին օրերին բարեկամների հետ փորձեցինք օգնություն ուղարկել աղետյալ ընտանիքներին բժշկական օգնություն, սնունդ ու հագուստ: Միաժամանակ ելնելով այն կարեւոր այցելությունից, որ սեպտեմբերին կատարեցին Հայաստանի վարչապետ Արմեն Դարբինյանը եւ իրեն ընկերակցող կառավարական ու գործարարների պատվիրակությունը Լիբանան, առիթ ունեցանք բազմաթիվ հանդիպումներ ունենալու հայաստանցի գործարար մարդկանց հետ: Մեզ ընդունեցին վարչապետ Արմեն Դարբինյանը, նախարարներ: Ստորագրեցինք բազմաթիվ համաձայնագրեր՝ գործարար կապերն ամրապնդելու եւ փորձի փոխանակման համար:

– Ինչպիսի՞ն է տնտեսական եւ առեւտրական հարաբերությունների իրավիճակը Լիբանանի ու Հայաստանի միջեւ:

– Հայաստանի վարչապետի այցից հետո տնտեսական եւ առեւտրական հարաբերություններն ավելի աշխուժացան երկու երկրների միջեւ: Լիբանանի արդյունաբերողների միության ընդհանուր քարտուղարը չորս այցելությամբ եղավ Հայաստանի արդյունաբերական բազմաթիվ կենտրոններում՝ ուսումնասիրելու զարգացման ու համագործակցության ոլորտները. Մենք եւս որքան փորձենք զարգացնել այդ հարաբերությունները, սակայն Հայաստանում արտադրությունը տակավին շատ թույլ է: Թույլ է՝ ոչ միայն արտադրողականության տեսակետից, այլեւ մարդկանց գնողական կարողության հարցերում եւ այլն: Այս բոլորը արգելում է հարաբերությունների արագ զարգացումը: Հակառակ այս բոլորին՝ ամեն ինչ անում ենք բարելավելու առեւտրական փոխանակման հաշվեկշիռը. Մեծագույն պատվիրակությունները եկան կառավարական եւ կանանց կազմակերպությունների խորհրդակցական համատեղ նիստ էր հրավիրվել սոցապ նախարարությունում՝ «ՀՀ գենդերային քաղաքականության զարգացման ծրագրի իրականացման» միտումները քննարկելու նպատակով: Ներկա էին նախարար Գագիկ Եգանյանը, կանանց ՀԿ-ների ներկայացուցիչներ եւ լրագրողներ: Միջոցառումն, ըստ ամենայնի, ծրագրված էր իբրեւ միջազգային «Գենդերային գործընթացների» հայաստանյան հերթական դրսեւորումներից մեկը, որ արձանագրվելու էր նախարարության հաշվետվությունում: Սակայն կանանց կազմակերպությունների ներկայացուցիչները գործնական ու մարտական էին տրամադրված եւ կանանց հարցերի լուծման, մասնավորապես գործազրկությունը չափավորելու ռազմավարության ցայտուն մոտեցումներ ու շոշափելի նախաձեռնություններ էին ակնկալում կառավարությունից:

Ըստ այդմ, կասկածի տակ առնելով ՀՀ աշխատանքի եւ զբաղվածության ծառայության պետ Գագիկ Բլեյանի զեկուցման մեջ բերված նախորդ տարիների համեմատ «վարդագույն» տվյալները մասնավորապես կանանց գործազրկության հարաբերական անկման, աշխատանքի տեղավորված գործազուրկների թվի հարաբերական աճի վերաբերյալ, արմատական հարցադրումներ արին. տարեկան 20-30 գործազուրկի հարց լուծելու համար արժե՞ մի ամբողջ ծառայություն պահել, սնկի պես աճող ոչ պետական բուհերը սահմանափակո՞ւմ են կանանց գործազրկությունը, թե պարզապես «օժիտացու» դիպլոմներ են թողարկում, որեւէ բան արվո՞ւմ է աշխատանքի «պրմիտիվ շուկան» բարեփոխելու համար, պետությունն իրական մասնակցություն ունի՞ աշխատատեղերի ստեղծման գործում, թե՞ պարզապես արձանագրում է «իրենց գլխի ճարը տեսած» երջանիկների թիվը եւ այլն:

Անսպասելի «հարձակումն» անակնկալի բերեց ու մի փոքր զայրացրեց պարոն Եգանյանին, որն անտեղի համարեց «գեղեցիկ հռետորական հարցադրումները»: Զբաղվածության ծառայությունը վերահսկում է զբաղվածության օրենքի կատարումը եւ խնդիրների շատ ավելի լայն շրջանակ ունի, քան նշվածը: Ավելի արդյունավետ կլիներ, ըստ նրա, գնահատել գենդերային քաղաքականության մեջ առկա տեղաշարժերը եւ կանանց խնդիրները թեթեւացնելու առաջարկներ ներկայացնել:

Իսկ այդ միտումները, զբաղվածության ծառայության պետի տվյալներով, այսպիսին են: 1998 թ. նոյեմբերին նույն թվականի հունվարի համեմատ աշխատանքի փնտրող չզբաղված քաղաքացիների թիվը կրճատվել է 36,5 հազարով՝ հասնելով 141,5 հազարի, որի 130,8 հազարը պաշտոնապես գործազուրկ են: Գործազրկության մակարդակը կազմել է 8,7 տոկոս՝ հունվարին արձանագրված 2,8 տոկոսի փոխարեն: Գործազուրկների 69,8 տոկոսը կանայք են, որոնց 93,4 տոկոսը՝ քաղաքաբնակ (հիմնական մասը Երեւանից, աղետի գոտուց եւ սահմանամերձ շրջաններից): 2,4 տոկոսն ունի միջնակարգ, 10,7 տոկոսը՝ բարձրագույն կրթություն, 55,5 տոկոսը 30-ից 50 տարեկան է: 1998 թ. անցած ժամանակահատվածում աշխատանքի է տեղավորվել 20 հազար քաղաքացի, որոնցից 12 հազարը կանայք են: 1994-97 թթ. զբաղվածության ծառայության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներում մասնագիտական ուսուցում են անցել 162 գործազուրկ (այդ թվում 103-ը՝ կանայք), մինչդեռ 1998 թ. այդ ցուցանիշը կազմել է 420 (այդ թվում 336-ը՝ կանայք): Վերջիններիս 37 տոկոսն արդեն իսկ տեղավորվել է աշխատանքի, մինչեւ տարեվերջ կվերապատրաստվի եւս 150 գործազուրկ: Ասել է թե՝ զբաղվածության ոլորտում դրական փոփոխություններ առկա են: Այլ հարց է, որ, քննարկման մասնակիցների մեծամասնության կարծիքով, դրանք աննշան են ու լավատեսություն չեն ներշնչում:

Լ. Պ.

Սթրեսները խթանել են հիվանդությունների աճը

Սպիտակի երկրաշարժի հետեւանքները մարդկանց առողջության վրա տասը տարի անց դեռ զգացել են տալիս: Այս հետեւությանն է հանգել 50 գիտնականներից կազմված խումբը, որը չորս տարի շարունակ հարցումներ է անցկացրել աղետի գոտու 7000 բուժաշխատողների ու նրանց ընտանիքների անդամների շրջանում: Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ, Բալթիմորի Ջոնս Հոփկինս համալսարանի համաճարակաբանության պրոֆեսոր, դոկտոր Հարություն Արմենյանի գլխավորությամբ անցկացված հետազոտությունը խնդիր ուներ պարզելու, թե մեծավորի կամ անձնական ունեցվածքի կորուստից ապրած սթրեսները հետագայում ինչ ազդեցություն են թողել մարդկանց առողջության վրա: Համաշխարհային առողջապահական կազմակերպության աղետների հաղթահարման ծրագրի ավագ մասնագետ Էրիկ Նոքինի գնահատմամբ հայաստանյան հետազոտությունն իր ընդգրկումով եւ մանրակրկիտությամբ եզակի է աղետի գոտիներում անցկացված ուսումնասիրությունների մեջ: Ըստ հետազոտության արդյունքների, որոնք հրապարակվել են «Համաճարակաբանության ամերիկյան ամսագրում», հոգեկան սթրեսները մեծապես խթանել են տրային հիվանդությունների, շաքարախտի, հոդացավի աճը: Երկրաշարժից հետո առաջին վեց ամսվա ընթացքում աղետի գոտում արձանագրվել է ամենամեծ թվով մահացությունը: Զգալի թիվ են կազմել մահացությունները հատկապես տրային հիվանդություններից: Հ. Արմենյանի խոսքերով, գիտնականները սթրեսային իրավիճակով պայմանավորված հիվանդությունների աճ են արձանագրել նաեւ զանգվածային աղետների այլ դեպքերում, այդ թվում՝ Հելենս լեռան ժայթքման, Փենսիլվանիայի ջրհեղեղների, Կալիֆոռնիայի երկրաշարժի, Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ:

Հետազոտողներն այն եզրահանգման են եկել, որ աղետներ վերապրածների շրջանում ժամանակին ցույց տրված հոգեբանական օգնությունը հնարավորություն կտա կանխելու տարբեր հիվանդությունների աճը: Սակայն, որպես կանոն, դա կրում է՝ ժամանակավոր բնույթ. աղետյալներին օգնության եկած խմբերը երկուերեք շաբաթից մեկնում են, իսկ տեղերում կանոնավոր գործող նման ծառայություններ այդպես էլ չեն ձեւավորվում:

Հ. Լեւոնյան

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Տուկա

Ովքե՞ր են ապրանքների ու ծառայությունների որակի դատավորները

Բոլորը եւ հետեւաբար՝ ոչ ոք

Վերջերս Հայաստանի 10 ձեռնարկություններ ՀՀ վարչապետից ստացան 1998 թ.-ի արտադրանքի եւ ծառայությունների մատուցման որակի ատստաթղթում ՀՀ կառավարության մրցանակներ՝ «Մրցանակակիրների» ցուցակի մանրամասն ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ այդ միջոցառման նպատակը ոչ այնքան ամենառակայալ արտադրանք տվող տնտեսական կառույցների ընտրությունն էր, որքան հայրենական արտադրության զարգացման հանդեպ կառավարության «հետեւողական ուշադրության» գովազդը: Որ ձեռնարկությունների վերջնական ընտրությունը կատարվել է կառավարության կողմից նրան կից Ատանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչության («Հայպետստանդարտ») միջոցով, կարող է միայն զարմանք հարուցել, սովորաբար տնտեսական կառույցներին որակի մրցանակներ եւ վկայականներ շնորհելը, որն արդեն վաղուց ընդունված կարգ է արեւմուտքում, միմիայն անկախ տեղական հասարակական կամ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների խնդիրն է, քանի որ այդ կերպ ընտրության ժամանակ բացառվում են չինովնիկների հնարավոր սուբյեկտիվությունն ու չարաշահումները: Ընդհանրապես, որեւէ արտադրանքի կամ ծառայության որակի դատավոր կարող է լինել միմիայն սպառողը, որը դժվար թե որակի մրցանակ տար, օրինակ, մի քանի ամիս շարունակ չաշխատող կամ մի կերպ գոյատեւող ծեռնարկության արտադրանքին: Վերոհիշյալ մտահոգություններին ի պատասխան «Հայպետստանդարտի» պետ Ղուկաս Մեհրաբյանի տեղեկացրած մի քանի մանրամասներից պարզվեց, որ մրցույթին ներկայացվել է 28 հայտ, «Անկախ ու չեզոք փորձագետները» 17-ից ընտրել են 10-ը: Առավել հետաքրքիր է ընտրության մեխանիզմը. առաջին փուլում ծեռնարկությունները իրենք են գնահատել իրենց արտադրանքի որակը, ինչպես նաեւ մնացած չափանիշները մենեջմենթը, մարքեթինգը, աշխատատեղերի քանակը եւ այլն (իհարկե, այստեղ կասկած չկա, որ ոչ մի ձեռնարկություն իր աշխատանքը բացասական չէր գնահատի-Գ. Մ.), երկրորդ փուլում ընտրել են փորձագետները, երրորդ փուլում հատուկ հանձնաժողովը արդյունաբերության եւ առեւտրի նախկին նախարար Գ. Նանագուլյանի նախագահությամբ, որը, Ղ. Մեհրաբյանի խոսքովանությամբ, անտեղյակ է եղել այդ ամբողջ գործընթացից: «Հայպետստանդարտի» ղեկավարն ինքն էլ չհերքեց, որ որակի մրցանակաբաշխությունը գովազդի մի ձեւ է, իսկ որպես վերջաբան, պրն Մեհրաբյանը մրցանակաբաշխությունը համեմատեց գեղեցկության մրցույթի հետ. ամենագեղեցիկ աղջկանից գեղեցիկն էլ կա, բայց շահում է նա, ով մասնակցել է գեղեցկության մրցույթին: Տվյալ դեպքում, եթե, ասենք, «Կիլիկիան» է ստացել որակի մրցանակ, դա չի նշանակում, որ «Կոտայքի» որակը ավելի վատն է, պարզապես վերջինս չի մասնակցել մրցույթին (*):

Ինչ վերաբերում է «Հայպետստանդարտի» գործունեությանն ընդհանրապես, միանշանակ է, որ այս կառույցը հանրապետության գործարար շրջանակներում ունի իր համար ոչ այնքան շահեկան գնահատական: «Հայպետստանդարտի» ղեկավարի հետ զրույցից, որը նպատակ ուներ հստակեցնել, թե ինչո՞վ է զբաղված կառույցն այսօր եւ որո՞նք են նրա խնդիրները, պարզվեց, որ այս բնագավառում կատարյալ շիլաշփոթ է, որից ամենաարհեստավարժն անգամ գլուխ չի հանի: Ղ. Մեհրաբյանի հետ ծայնագրիչի երկու ծայներիզներում մի կերպ «տեղավորած» զրույցից հաջողվեց պարզել հետեւյալը.



«Ամբողջ ազգը չի կարող ամբողջ ազգին ստուգել»

Անորակ կամ կասկածելի ծագմամբ ապրանքներով ողողված Հայաստանի շուկայի մասին խոսելն ու գրելը մեր ժամանակների ամենամոդայիկ թեմաներից մեկն է, սակայն, ըստ «Հայպետստանդարտի» ղեկավարի, չի կարելի միանշանակ հայտարարել, թե Հայաստանի շուկան անորակ ապրանքներով է լցված, որ մեր ազգի առողջությունն ու գենոֆոնդը վտանգի տակ են. «Ամենահետաքրքիրը ստուգելն է, ոչ ոք չպետք է իրեն իրավունք վերապահի դատելու անորակության կամ վնասակարության մասին, եթե նմուշները համապատասխան անալիզի չեն ենթարկվել: Իսկ այսօրվա դրությամբ ճշգրիտ անալիզ կարելի է կատարել միայն «Հայպետստանդարտի» կողմից հավատարմագրված 65 լաբորատորիաներում: Ի դեպ, տեղեկացվեց, որ այս տարի «Հայպետստանդարտի» կողմից նմուշների ուսումնասիրությունների արդյունքում կասեցվել է մոտ 40 մեծ խմբաքանակով ապրանքատեսակների մուտքը հանրապետություն: Ըստ Ղ. Մեհրաբյանի, ոչ ոք չի կարող «Հայպետստանդարտին» մեղադրել անորակ ապրանքներով ողողված շուկայի համար: Ասել է թե՝ «Հայպետստանդարտը» ռեփզորական մարմին չէ, որ ընկնի շուկաներն ու ստուգումներ անցկացնի», նրա խնդիրները շատ ավելի գլոբալ են. իրենք իրականացնում են պետական քաղաքականությունը ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման բնագավառում, պատասխանատու են բնակչության կյանքի, շրջակա միջավայրի անվտանգության համար, իսկ ապրանքի որակի գնահատականը պետական խնդիր չպետք է լինի, դա սպառող-արտադրող հարաբերություններում պետք է ճշտվի: Ինչ վերաբերում է շուկաներում ու առեւտրի կետերում պարբերաբար իրականացվող ստուգումներին, արդեն մի քանի ամիս է կառավարության որոշմամբ տեղական մարմիններին կից ստեղծվել են պետական տեսչություններ, որոնք էլ իրականացնում դամբերի անորակության կամ վնասակարության մասին, եթե նմուշները համապատասխան անալիզի չեն ենթարկվել: Իսկ այսօրվա դրությամբ ճշգրիտ անալիզ կարելի է կատարել միայն «Հայպետստանդարտի» կողմից հավատարմագրված 65 լաբորատորիաներում: Ի դեպ, տեղեկացվեց, որ այս տարի «Հայպետստանդարտի» կողմից նմուշների ուսումնասիրությունների արդյունքում կասեցվել է մոտ 40 մեծ խմբաքանակով ապրանքատեսակների մուտքը հանրապետություն: Ըստ Ղ. Մեհրաբյանի, ոչ ոք չի կարող «Հայպետստանդարտին» մեղադրել անորակ ապրանքներով ողողված շուկայի համար: Ասել է թե՝ «Հայպետստանդարտը» ռեփզորական մարմին չէ, որ ընկնի շուկաներն ու ստուգումներ անցկացնի», նրա խնդիրները շատ ավելի գլոբալ են. իրենք իրականացնում են պետական քաղաքականությունը ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման բնագավառում, պատասխանատու են բնակչության կյանքի, շրջակա միջավայրի անվտանգության համար, իսկ ապրանքի որակի գնահատականը պետական խնդիր չպետք է լինի, դա սպառող-արտադրող հարաբերություններում պետք է ճշտվի: Ինչ վերաբերում է շուկաներում ու առեւտրի կետերում պարբերաբար իրականացվող ստուգումներին, արդեն մի քանի ամիս է կառավարության որոշմամբ տեղական մարմիններին կից ստեղծվել են պետական տեսչություններ, որոնք էլ իրականացնում են ստուգում եւ վերահսկում, բայց նրանք, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունները, չունեն ապրանքների որակի ստուգման հնարավորություններ, քանի որ ստուգողները որպես կանոն մասնագետ չեն եւ որեւէ ապրանքի կամ ծառայության գնահատական տալու համար պետք է դիմեն դարձյալ «Հայպետստանդարտի» ծառայություններին, եթե, իհարկե, շահագրգիռ են դրանում: Այսինքն ստեղծվել է մի ավելորդ մարմին, որին տրված է շուկայի վերահսկման իրավունքը, բայց ոչ՝ իրականացնելու հնարավորությունը: «Հայպետստանդարտի» խնդիրը ստանդարտներ մշակելն է, վերոհիշյալ տեսչությունների խնդիրը դրանք ստուգելը, առաջինի խնդիրը «կշեռքը պլոմբելն է», իսկ նրանցը՝ «պլոմբը ստուգելը»: Ինչ վերաբերում է հանրապետությունում արտադրվող, ոչ թե ներմուծվող, ապրանքների, ինչպես նաեւ ծառայությունների որակի ստուգմանը, ապա այստեղ կա մի կարեւոր խնդիր՝ յուրաքանչյուր նոր արտադրություն սկսելիս արտադրանքի անվտանգության չափանիշների, ստանդարտների համապատասխանելիությունը երաշխավորված չի կարող լինել, քանի որ նոր գրանցվող ծեռնարկություններն ու ֆիրմաները, անհաս ծեռներեցները, արտոնագիր են ստանում արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունից, իսկ վերջինս չունի արտոնագրի համար պարտադիր պահանջների ստուգման հնարավորություններ: Մի խոսքով՝ իրավունքների ու պարտականությունների մի կատարյալ քաոս, որտեղ, բնականաբար, ոչ ոք չի կարող պատասխանել, թե, վերջապես, կոնկրետ ովքե՞ր են զբաղվելու ապրանքների ու ծառայությունների որակի ապահովման ու վերահսկման խնդիրներով կամ ովքե՞ր են պատասխանատու Հայաստանի շուկաներում «սելավի» պես լցվող արտասահմանյան, ինչո՞ւ չէ, նաեւ հայրենական արտադրանքի որակի համար:

ԳԱԲՐԻԵԼ ՄՈՒՔՈՅԱՆ

Փողոցային առեւտուրը հնարավոր է վերափոխել, բայց ոչ վերացնել

Շուրջ 5-6 տարի փողոցային առեւտուրը դարձել է մեր սոցիալ-հասարակական կյանքի անբաժանելի հրողություններից մեկը: Ինչո՞ւ առեւտրի նման ոչ քաղաքակիրթ տարբերակը մտավ մեր կենցաղ: Դեռ 2 տարի առաջ անցկացված հարցման արդյունքները ցույց տվեցին, որ փողոցային առեւտուրը գործազուրկ հայի ընտանիք պահելու միակ միջոցն էր՝ անկախ կրթությունից, տաղանդից կամ մասնագիտությունից: Մեկ այլ տեսանկյունից փողոցային առեւտուրը որակվեց որպես նորանկախ Հայաստանի ապրած անցումային փուլի (շուկայական հարաբերություններին անցնելու) անխուսափելի տարր: Ինչպես երկու տարի առաջ, այնպես էլ այսօր, բերեւս բոլորս էլ օգտվում ենք փողոցում առաջարկվող ապրանքների եւ հատկապես սննդամթերքի տեսականուց: Այլ հարց է, որ առեւտուր ենք անում սիրտդված, տհաճությամբ՝ գիտակցելով, որ սննդամթերքի վաճառելու սանիտարական կանոնները, մեղմ ասած, բոլորովին հաշվի չեն առնվում:

Որպես վառ օրինակ կարելի է մտաբերել «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանին կից սննդամթերքի տնավաճառը: Դեռեւս մեկ ամիս առաջ այս տարածքը հիշեցնում էր մայրուղու երկայնքով ծգվող շուկա, որի նմանը դժվար էր երեւան քաղաքի մեկ այլ կետում գտնել՝ չհաշված մետրոյի «Բարեկամության» կայարանի գետնանցումը: Ռաբիսի զիլ հնչյունների տակ, 50 դրամով էժան գնում կատարելու փնտրտուքի մեջ միմյանց հրմշտելով շարժվում էին հաճախորդները՝ ոտքի հետ տանելով գրեթե գետնին դասավորված սննդամթերքը: Փոշու ու կեղտի մեջ էր թե՝ փաթեթավորված եւ թե՝ բաց (հացաբուլկեղեն) սննդամթերքը: Կողքին աղբ էր, իսկ հարեւանությամբ խորոված էին անում ու նրբերիկ տապակում:

Մի խոսքով՝ տհաճ իրականություն, որը սակայն վերափոխելու փորձեր էլ են անում: Այսօր տնավաճառի տարածքում շինարարություն է կատարվում, թեեւ տնավաճառը միաժամանակ շարունակում է աշխատել: Արդեն տեղադրված տաղավարների կարմիր ծածկերը ինքնին հուշում են բոլորիս քաջ հայտնի Սուքիասյանների ձեռագիրը: Իրոք, տաղավարների տեղադրումը նախաձեռնել են վերոնշյալ գործարարները, իսկ դրանցով զբաղվում է «Սիլ պրոֆիլը» հանձին տնօրենի՝ Հակոբ Բարսեղյանի: Ինչպես տեղեկացանք պրն Բարսեղյանից, տաղավարների տեղադրումը երեք հիմնական նպատակ է հետապնդում. նախ ժողովրդի համար քաղաքակիրթ առեւտուր կազմակերպել, ապա նպաստել քաղաքի այս հատվածի գեղեցկացմանը, եւ վերջապես, հետագայում տնավաճառը փոխարինել սննդամթերքի վաճառքի կենտրոնացված համալիրով: Տնավաճառում արդեն տեղադրված են վեց տաղավարներ, որոնցից վերջինը՝ ամենամեծը, զբաղեցնում է 415 քառ. մ տարածք: Տնավաճառը բաժանված է վերեւի՝ մետրոյի կայարանին կից, եւ ներքեւի՝ դեպի «Շամիրամ» սրճարանը ծգվող մասերի: Վերեւի հատվածում տարվող աշխատանքները ավարտելու են մինչեւ տարեվերջ: Տնավաճառի ներքեւի հատվածին պետք է ճարտարապետական լուծում տրվի եւ վերջինս իր գեղեցկությամբ գերազանցելու է վերեւի հատվածին: Այժմ կառուցվող հատվածի կենտրոնական մասում պետք է տեղադրվեն բեթեւ ծածկերով բացօթյա տաղավարները: Մեծածախ առեւտրով զբաղվողները կտեղափոխվեն այս ծածկերի տակ, որտեղ պայմաններ կստեղծվեն մեծ քանակությամբ ապրանքներ տեղավորելու համար:

Մետրոյի կայարանի տարածքում իրականացվող փոփոխությունները ոչնչով չեն ծանրաբեռնում կամ վտանգում մետրոն. «Ամեն ինչ այստեղ հաշվարկված է, ոչ մի անցք այս տարածքում չի փորվել: Կենտրոնական հատվածում լինելու է շերտավոր ասֆալտ՝ տեղանքը ջրերից պաշտպանելու համար: Այս հատվածը նախատեսվում է ավելի թեթեւ մեթոդներով կառուցապատել», ընդգծեց պրն Բարսեղյանը:

Ինչ վերաբերում է մետրոյի գետնանցումին, ապա այստեղ որեւէ փոփոխություն չի արվել: Փողոցային առեւտրի այսօրինակ վերափոխումը դեռ չի տարածվում «գետնանցումային» առեւտրի խառնաշփոթի վրա:

Տնավաճառը, շնորհիվ տեղադրված տաղավարների, արտաքնապես շատ է փոխվել: Սակայն էական փոփոխություններ տնավաճառի մթնոլորտում տեղի չեն ունեցել: Նույն մարդիկ են, նույն սեղանիկները, նույն երաժշտությունն ու խոհանոցային հոտավետությունները, միայն թե շատ գեղեցիկ, ինչ-որ տեղ նաեւ ծոխ (նախորդ վիճակի համեմատությամբ) տաղավարներում: Ապրանքատեսակների բազմազանության համադրումը շարունակում է զարմացնել առանց այդ էլ բժժած հաճախորդին, միեւնույն սեղանիկից կարելի է գնել թե՝ գրենական պիտույք, թե՝ ուտելիք, թե լուցկի: Ցուղավորել առեւտուրն ըստ տեսակների հնարավոր չէ: Տնավաճառը մնում է տնավաճառ:

Այլ է, օրինակ, երբ մոտենում ես «Գեղարդ» ֆիրմայի տաղավարին, որտեղ վաճառվում է միմիայն ֆիրմայի արտադրության երշիկեղենը: Այս տաղավարը ծեւավորված է նեոնային լույսերով եւ գովազդային վահանակով: Կարելի է ենթադրել, որ շուտով զանազան ֆիրմաներ՝ «Գեղարդի» օրինակով, կգնեն տաղավարներ եւ կվաճառեն իրենց իսկ արտադրության տեսականին: Թերեւս պետք է հավատալ, որ կամաց-կամաց նվաճում ենք մարդավայել կենցաղավարման կանոնները:

Տաղավարներում անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ առեւտրականները գոհ են ստեղծված պայմաններից, քանի որ այսուհետ պաշտպանված են ամառվա շոգից ու ձմեռվա ցրտից, բայց դժգոհում են, որ շաբաթական տեղավճարը բարձրացել է՝ 40 դոլարից դարձել է 60 դոլար: Բայց, տաղավարներ տեղափոխվելուց հետո այլեւս չունեն պահեստ որոնելու խնդիր: Այնինչ մինչեւ տեղափոխվելը ամեն առավոտ ու իրիկուն առեւտրականներն իրենց ապրանքը սայլերով էին տանում տնավաճառից պահեստ եւ հակառակը:

Ստեղծված իրավիճակը մեկ անգամ եւս ապացուցում է, որ այսօրվա պայմաններում լիովին վերացնել փողոցային առեւտուրը հնարավոր չէ: Այն վերահսկելի է այնքանով, որքանով կարելի է վերափոխել ու քաղաքակիրթ տեսք տալ դրան:

Իսկ որ «ինչ-որ» մարդիկ կարգուկանոն հաստատողի կարգավիճակով «էշում են» առեւտրականներին այստեղից-այնտեղ փողոցային առեւտուրը վերացնելու նպատակով, ուղղակի կեղծ օրինապահության գործադրում է, որը, վերջին հաշվով, հարցը չի լուծում: Այնպես որ այս գործով զբաղվող պետական մարմինները եւս չպետք է զուր ջանքեր թափեն այս ուղղությամբ: Ավելի լավ է մտածել փողոցային առեւտուր կոչված երեւույթին քաղաքակիրթ արտահայտություն տալու մասին:

ԷԼԵՆ ԳԻԼԻՍԿԻՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԻՍՐԱՅԵԼ

«Բացեք Ողջակիզման արխիվները»

Պահանջում են հրեաները «սեւ ցուցակ» հրապարակելով

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը Երուսաղեմից հաղորդում է, որ ցանկանալով Ողջակիզման շրջանի արխիվները մուտք գործելու ավելի լայն հնարավորություններ ձեռք բերել, Իսրայելը հրապարակել է ցուցակն այն հիմնարկությունների, որոնք, ըստ իսրայելական պաշտոնական աղբյուրների, արգելքներ են դնում հետազոտողների առաջ:

Վերջերս հրապարակված մի նամակում վարչապետ Բենիամին Նաթանյահուի տիյուռքի գծով խորհրդական Բոբբի Բրաունը թվարկել է Եվրոպայում եւ Ռուսաստանում գտնվող մի տասնյակ արխիվների անունները, որոնք «մերժել են կամ չեն համագործակցել տեղեկությունները մատչելի դարձնելու գործում»: Նշված պետական հիմնարկների թվում են Վատիկանի արխիվները, ֆրանսիական ազգային արխիվները, բենամու ունեցվածքի բրիտանական հսկողության թղթապանակները, բրիտանական MI5 հետախուզական գործակալության եւ պետական կենտրոնական արխիվները, ինչպես նաեւ Պրահայի հրեական թանգարանը:

«Մենք կոչ ենք անում նշված յուրաքանչյուր հաստատության բացելու իրենց թղթապանակները, որպեսզի մենք կարողանանք իմանալ, թե ինչու քաղաքակիրթ հասարակությունը թերացավ իր էական պարտականությունների մեջ՝ ապահովելու մեր ժողովրդի անվտանգությունը, կյանքը, ազատությունն ու սեփականության իրավունքը», ասված է նոյեմբերի 22-ի շրջաբերականում, որը հասցեագրվել է Ողջակիզման գույքի գնահատմանը նվիրված Վաշինգտոնում գումարվելիք կոնֆերանսին եւ մասնակցող իսրայելական պատվիրակության ղեկավարներին:

Նամակի հրապարակումը, որտեղ չհամագործակցելու օրինակներ չեն բերվել, մեծ աղմուկ է բարձրացրել համաշխարհային հիմնարկներում: «Մենք տվել ենք նրանց ամեն ինչ, ամեն փաստաթուղթ, որ պահանջել են», ասել է Չեխիայի ներքին գործերի նախարարության խոսնակ Յան Դեկերը, ավելացնելով, որ Իսրայելի Յադ Վաշեմ Ողջակիզման թանգարանը դեռեւս 4.600 դոլար պարտք է Հրեական թանգարանին տրամադրված փաստաթղթերի միկրոժապավենների համար:

Նամակի հրապարակումը ֆոնդատուների մի խումբ հարց է առաջ քաշել, թե արդյոք Իսրայելը, որն ինքն է հաճախ բոյկոտի թիրախ դարձել, պե՞տք է հրապարակի նման սեւ ցուցակներ: «Որպես ժողովուրդ մենք պետք է խուսափենք սեւ ցուցակներից», նշել է հակազրպարտանքի լիգայի տնօրեն Աբե Ֆոքսմենը: Արխիվների մատնանշումը «անպատասխանատու եւ անարդյունավետ է», ասել է նա Ասոշիեյթեդ պրեսին:

Բանավեճը սուր բնույթ է ստացել Վաշինգտոնի կոնֆերանսից չորս օր առաջ: 44 երկրների պատվիրակություններ ֆոնդարկելու էին ավար վերցված արվեստի գործերի, համայնքային սեփականության, ապահովագրությունների արժեքների գնահատման չափանիշները, ինչպես նաեւ հանրային եւ մասնավոր գործակալություններում գտնվող արխիվների եւ թղթապանակների բացման հարցերը:

Բրաունի խոսքերով, իսրայելցի եւ գերմանացի պատասխանատու անձնակազմերի միջեւ կոնֆլիկտ է առաջացել: Գերման

ԱԶԳ

Մշակույթ

Քանզի իրոք դա է ճշմարտությունը...

Բաց նամակ Անահիտ Թոփչյանին իր նոր-ասիպ գրքի առիթով

Ուրեմն երկար ժամանակ ֆո գրի հետ եմ, ընթերցում եմ նորից ու նորից՝ ոչ միայն «գրախոսական» կոչվող մի շարադրանք դրոմելու համար: Ոչ, դարգարդես հնարավոր չէ կտրվել նրանից: Ամեն անգամ նորանոր շերտեր են բացվում ինձ համար, երբեմն էլ բվում է, թե շատ մոտ եմ զգացածս բդրիվ հանձնելուն, երբեմն էլ գրելիս մշուշոտ է դառնում, իմ ընթերցումներն աճահատակ գրականության մասին՝ բյուր ու կասկածելի: Ուստի թույլ տուր սովորական գրախոսականի տեղ մի նամակ գրել քեզ, եւ թե կամիս՝ թող կոչվի «բաց նամակ», եւ ուրիշներն էլ կարդան:

Այս դեպքում, սակայն, «ուրիշները» բաց տեղին չէ: Դրանք առաջին հերթին ֆո բեմական արվեստի երկրագուներն են, որոնք խանհինգ տարի հավատարմորեն քեզնով ապրելով՝ մի օր բատրոնում ֆո տեղը բափուր գտան: Ի՞նչ դպահեց մութ տարիներ, բատրոնի եւ հեռուստատեսության, կինոյի ճգնաժամ, եւ ահա Անահիտ Թոփչյանը Փարիզում: Մի՞թե չդիմացավ, տվեց հետ ապրելու գայթակղությանը, արդյոք կվերադառնա՞, ե՞ր, կբարունակի՞ խաղալ...

Այս եւ նման հարցերին դպասախան է տալիս ֆո գիրքը(*), որն իսկապես վերադարձ է, բայց ոչ միայն նոր՝ գրական ասպարեզ: Ոչ, վերադարձել է նաեւ արհեստուհին, իր իսկ դիպուկ, նորահնար բառով՝ դերարարը, սակայն արդեն խաղալու ոչ թե ուրիշների, այլ իր ստեղծած դերերը: Իբրեւ արձակագիր սա ֆո առաջին առավելությունն է. քեզ նվիրված մի մեծ լսարանի առկայությունը, եւ, ամենակարեւորը՝ քեզ ընթերցելիս յուրաքանչյուրի մտքում տրված է ֆո կերպարը, մեր քունքերում հնչող ձայնը:

Գրողն այլեւս մի անորոշ անձնավորություն չէ, այլ արհեստուհի, որն իր խաղացած անհաշիվ դերերում հագնել, ամբողջացրել է իր անհատականությունը հավաքական մի կերպար, ասես իր ճակատագիրը միահյուսելով իր խորաթես ադրած կանանց կերպարների հետ: Քո դպատմվածքներից յուրաքանչյուրում՝ առաջին դեմքով գրված, թե երրորդ, մի հավատի կերպար կա, որը միայն դերասանուհին կարող է ստեղծել, որն հաճախ չարչարվել է զանազան դրամատուրգների երբեմն գրքունակ, մտացածին կերպարները սեփական ավիշով, արյամբ լցնելու համար: Քո գիրքն ընթերցելուց հետո այլեւս առաջ գծագրվում է մի հեղինակային բատրոն, որտեղ դու ներկայացնում ես ֆո գրած դերերը, որը նորություն է լինելու եւ գրական, եւ բատերական կյանքում եւ դրսեւորվելու ես լիովին... Սակայն ապագայից առաջ չընկնենք, տա՛ Աստված: Իսկ այժմ ըմբոշխնում եմ մտովին արձակդ ֆո իսկ ձայնով կարդալու հաճույքը, որը նույնքան հարուստ է հուզերանգներով եւ ձայնային ելեւէջներով, որքան դերերդ: Մեկ բախծոտ է դառնում ու տագնապահար, մերթ հնչում հեգնական կամ հարգական, նյարդայնությունից ոլկվելով բեկվում, բրբռում ու խզվում կոկորդում, մեկ հնչում կրծքային՝ կանացի, խորհրդավոր, հուզող, հրապուրող: Որքա՜ն ձայներ կան ֆո արձակում... Ռուս Մարինան, լեհուհի Մագդալինան, օդեսացի Լորան եւ վիեննաժուհի Ռիտան, վրացուհի Վերիկոն՝ ամեն մեկն իր ժողովրդին բնորոշ ճակատագրով ու խառնվածքով: Այստեղ էլ բեմից գրականություն գալը քեզ երկրորդ առավելությունն է տալիս:

– Հայկական բեմարվեստ մտար որպես դերասանուհու միանգամայն նոր տիպ: Դա արդեն ժամանակակից կին էր՝ առանց ազգային ցցուն, ոճավորող հատկանիշների: Ուստի քեզ բաժին ընկավ ծառնավորել հատկապես արեւմտյան եւ սուս կանանց մի ամբողջ պատկերասրահ: Տարիներ առաջ ֆո բեմական արվեստի մասին գրելով նկատել եմ մի յուրահատկություն՝ անգամ բացասական հաճարվող դերերը կերտում էիր այնպիսի հանդգնությամբ, արժանապատվությամբ, առանց բարդույթների նույնանալով «բեքեւաբարո» կանանց, սիրուհիների կերպարներին, առանց շատ դերասանուհիների բնորոշ երեսպաշտությամբ նրանց դասապարտելու, որ դրանք այլ իմաստ էին ստանում եւ դառնում միայնակ, ճախողված կանանց* իրենց շրջապատող հոգի աշխարհին նետված բողոքի խորհրդանիշներ:

Քո արձակում էլ հիմնական հատկանիշներից մեկը համարձակությունն է: Դու մեզ ներկայացնում ես հայ գրականության մեջ սկզբունքորեն նոր կին գրողի տիպ, որն, ի տարբերություն նախորդների՝ չի փորձում տղամարդ խաղալ: Դա արդեն ժամանակակից ազատագրված կինն է, որը կյանքում վաղուց է հաստատել իրավահավասարությունը տղամարդու հետ, բայց ունի անուրանալի առավելություն. հատկապես կինն է դյուրազգաց, որն իր վրա է զգում ժամանակի, հասարակության բոլոր փոփոխությունները: Նա Մայրության, Սիրո մարմնավորումն է, Բնությունն ինքը, եւ յուրաքանչյուր բարոյահոգեբանական ճգնաժամ ողբերգական անդրադարձներ է թողնում նրա հոգում, սասանում մարդկային հասարակության գոյատեւման հիմքը: Ասես բեմից կյանք մտնելով, սա՝ գրականություն գալով նուրբ եւ բեկված կին-արարածի հոգու խոսնակի դերն ես դու ստանձնել, ու պատմվածքից պատմվածք խորացնում ես՝ առանց պատմություններդ ոճելու մելոդրամատիկ սենսիմենտալության մտուրով, իրերն իրենց անունով կոչելով: Պահպանողական ճաշակի տեր ընթերցողին, յասենք՝ հաղթնուն, այդ բանը կարող է եւ վանել: Կարող է անգամ սարսեցնել ֆո հավատի պատումների անողոքությունը, որը նա կարող է բնութագրել «յարություն» բառով: Թեկուզեւ ցանկանում ես ասել, իսկ ինչո՞ւ չդիտ է յարանա արդի սոցիալական ցնցումների, կեղծ գաղափարական, խաղաթղթական ուսմունքների եւ անվերջ փորձերի հետեւանքով փլուզված ոճեսությունների, հասարակությունների փլատակների տակ մնացած, երբեմն անգամ վարձու մարդասպանի թիրախ դարձող կինը:

Իբրեւ նման մի կին էլ կարող է դիտվել ֆո հեղինակ-հերոսը, որին ոչ միշտ կարելի է նույնացնել մեզ ծանոթ արհեստուհուն եւ վերջիվերջո հայ կնոջը, թեեւ նա կրկին խիզախորեն իր վրա է վերցնում շատերի կերպարը, տանջվում եւ խայվում նրանց փոխարեն: Եվ ահա մեզ ծանոթ սիրելի դերարար Անահիտը հայտնվում է այն աշխարհում, որի կանանց հաճախ է խրդացել հայ բեմում: Հայտնվում գուցե նրանց կյանքը բաժանելու, նրանցից մեկը լինելու, ավելի խորը հասկանալու համար: Նա հրաշալի է մատուցում նոր Փարիզը՝ որն արդեն ոչ Պիկասոյի Փարիզն է, ոչ Հեմինգուեյինը, մի խոսքով շարունակ քեզ հետ եղող մի տոն: Երբ անգամ պատմվածքը վերնագրված է «Հրաշալի խաղաղ Փարիզը», ապա դա պատմություն է պատմական բարդ կապակցիությունների խտացում դարձած մի մոնոլիթանան, վրացի նորահարուսի՝ նախկինում ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության բանգարանի տնօրեն Շալիկո Շալվովիչի մասին, որը միլիարդ է ծախսել ցնորք-Փարիզն ըմբոշխնելու համար՝ եւ իր Սալինին շատ նման կերպարանքով, խորհրդային եւ անցումային շրջաններում անհուսորեն ծեւախեղված էությամբ շատ ուշ է հասնում նրան եւ անուժ անգամ էֆելը բարձրանալու այդ խաղաղի անբերի գագաթների, կանայ խոսի միջոցով վերագտնում բնությունից երկար կտրված վրացի գեղջուկ պատանուն... Փարիզի խոսն է նրա հայտնությունը, դրա շնորհիվ մազապուրծ ազատվելով մյանց: Շենք ունեցել մի գրող, որը գնար եւ ապրեր օտարության մեջ, բաժաներ մեր հայրենակիցների կյանքը Հայաստանի ծնունդ, ուստի՝ ճշմարիտ կերպով այն արժեքավորող հեղինակի տեսանկյունից: Լավ է, որ այդ մեկը դու դարձար, որը բեմում իր բարդույթները բոբափած, անկեղծության հասած անձնավորություն էր: Դու իրավունք նվաճեցիր անգամ հեգնական թվացող, դաղը պատմվածքներդ գրելու, որովհետեւ ապրեցիր նույն իրականության մեջ, հայ մարդուն պարտադրված օտար օրենքներով, դժվարություններով, եւ ձայնդ «հետ տեղն չի գար»: Քո մատուցած կերպարների ողբերգականությունը ցնցող է ֆո մատուցած պարզ պատմությունների շնորհիվ: Դու չես վիճարկում ոչ մի անհաշտ հայրենասիրությունը, կասկածում նրա հայ լինելիությանը, լինի «խենթ աղջիկը» պատմվածքի ժամանակի եւ իրականության զգացումը կորցրած պառավը, որը ենթենից մազապուրծ մի ողջ սերնդի պատմական արդարությանը հասնելու կույր հավատի մարմնացումն է, լինի դրա հակոտնյա կերպար «Տիկին խենթի» պառավը, որը վեց զավակ ունենալով՝ կորցրել է տհմիկ դաստիարակության հմտությունն ու դատարարվել խստմնելի մենակության: Պատահական չեն ծեր մարդկանց բազմաթիվ կերպարները ֆո պատմվածքներում՝ արագորեն սահելով նրանց երիտասարդ տարիների բարեկեցության եւ հաջողակության ինքնախաբկանքի վրայով՝ դու դիտողի անողոքությամբ, սուր նշտարով հատում եւ ցուցադրում ես հետեւանքը՝ հատուցումը, ծերությունը, որն օտարության մեջ ապրող հայ եւ ոչ միայն հայ մարդու ամենածանր պատիժն է: Նման պատմվածքների կերպարները ցանկանում եմ նաեւ դիտել ֆո ստեղծած մի գրական համայնապատկերի ֆոնի վրա, ֆո «Փարիզապատումն է»՝ բայց Փարիզի տեղը կարող էր աշխարհի ուզած քաղաքը լինել: Համենայն դեպս՝ ժամանակն ու տեղն ավելի շահեկան է դարձնում ասելիդ, քանի որ Փարիզն է, որը քաղաք չէ տոկ, այլ մարդկային քաղաքակրթության առասպելական խորհրդանիշներից մեկը: Ինչպես է հայ մարդը հարմարվում այդ առասպելին՝ անվերջանալի մի նյութ է, երեւույթ, որի հաղթանակների մասին գիտենք միայն՝ Ազնավուր, Վերնոյ, Գաղղու, Քայլա եւ էլի մի տասնյակ անուններ... Իսկ ի՞նչ է առհասարակ արդի Փարիզը սովորական մարդու համար իր էյֆելյան աշտարակով, որը հիմա Բաբելոնյան է դարձել պարզապես...

Քո փարիզապատումը բացառիկ է: Դու չես փորձում հասկանալի դարձնել անբացատրելին, հասկանալ վերուվարումների, միլիոնավոր մարդկանց ճակատագրերի մեջ մխրճված այդ առեղծվածը: Փարիզը ֆո պատմվածքներում բեկվում, անցնում է յուրաքանչյուր կերպարի միջով, ինչպես այդ կերպարներն են ֆո միջով անցնում: Այդպիսով՝ ինքդ էլ ես դառնում Փարիզի մի մասը, նրա ոգին կրողը, բայց դա արդեն ուրիշ քաղաք է՝ 20-րդ դարավերջի մարդկանց նոր, հուսահատական գաղթի օրհասում հայտնված: Հրաշալի կերպով գտել ես ֆո՝ գրող-պատմիչիդ տեղն այդ բոհեմբոհում, ինքդ էլ անպատշաճ նույնքան, որքան հերոսներդ, մաշկիդ վրա ապրվածի միջոցով ստուգում ես յուրաքանչյուրի կյանքը, կորածնվում այդ լաբիրինթոսի ամեն մի մարդկային խլյակի հետ, բայց նաեւ՝ գոյատեւում, հասատվում, զորանում, քանի որ «Լեդի Ս.Դ.Ֆ.» էսսե-մոնոդրամի հեղինակ հերոսի հավատով՝ սպասում ես Փրկության հրաշքին եւ գիտակցում, որ «ոչ ոք չի կարող փրկվել, երբ փրկված չեն բոլորը»: Եվ որ, վերջապես, բոլոր հայերս, ուր էլ ապրենք, ինչ ճակատագիր էլ ունենանք «բոլորս նույն ողբերգությունն ենք ժառանգել, եւ բոլորս միասին, մի գեղեցիկ օր՝ կաղանդին, մեր եփած աուուշապուրը պիտի ուտենք...»:

*) Անահիտ Թոփչյան. Lady S. D. F. Պատմվածքներ եւ մոնոդրամներ. երեւան. «Լույսի», 1998 թ., 189 էջ

ՍՈՒՐԷՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Գյումրին ծափահարում է Վլադիմիր Սպիվակովին

Շաբաթ օրն աշխարհահռչակ ջութակահար, ԽՍՀՄ, Ռուսաստանի ու Հայաստանի ժողովրդական արտիստ Վլադիմիր Սպիվակովին ծափահարում էին, ճիշտ է, հեռակա, Գյումրիում: Լինելով այստեղ հոկտեմբերի կեսերին եւ լսելով գյումրեցի տաղանդների նվագը, նա խոստացել էր երաժշտական գործիքներ ուղարկել պատանի ջութակահարներին: Սակայն, փարիզյան աճուրդում Վլ. Սպիվակովը գնեց դարասկզբի ֆրանսիացի վարպետների երկու արժեքավոր ջութակ, որոնք Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղին հանձնեց կրթօջախի ռեկտոր, պրոֆեսոր Արմեն Սմբատյանը: Իր ելույթում ռեկտորն ասաց, որ ջութակահարը շատ տպավորված ու ոգեւորված էր հայ պատանի տաղանդներով: Ա. Սմբատյանն առաջարկեց, որ ստեղծվի հատուկ խորհուրդ, որը եւ կորոշի, թե ում են տրվելու ջութակները: Գործիքները կլինեն «փոխանցիկ», նշեց ռեկտորը:

Մասնաստրոյի ուշադրությունը շատ պարտավորեցնող է, ասաց կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի տնօրեն Ստեփան Խաչատրյանը: Այս օրերին, երբ նշվում է 1988 թ. երկրաշարժի 10-ամյակը, Վ. Սպիվակովի նվերն ապագայի հույս ու համոզմունք է ներշնչում, ասաց նա:

Թեեւ առիթը մեծ ու նշանակալից էր, սակայն ջութակների հանձնման արարողությունն անցավ աշխատանքային մթնոլորտում: ըստ էության դա ռեկտորի հանդիպումն էր իր գործընկերների հետ: Ծավալվեց խոսակցություն կոնսերվատորիայի մասնաճյուղի գործերի ու հոգսերի, ուսումնական ծրագրերի մասին: Մասնաճյուղի դասախոսները ցանկություն հայտնեցին ավելի ակտիվորեն մասնակցել կոնսերվատորիայի ամբիոնի աշխատանքներին: Դա ոչ միայն ցանկալի է, այլեւ պարտադիր, արձագանքեց ռեկտորը: Աշխատակիցները կտրականապես դեմ արտահայտվեցին Հկկ Լենինականի քաղկոմի նախկին շենքում գործող երեք երեւանի կոնսերվատորիայի, գեղարվեստական եւ բատերական արվեստի ինստիտուտների մասնաճյուղերի միավորման վերաբերյալ պարբերաբար հնչող առաջարկներին: Բնականաբար խոսվեց ցածր աշխատավարձերի մասին: Ռեկտորը հավատիացրեց, որ միջոցներ է որոնում այս կնճռոտ հարցը լուծելու համար: Մասնաճյուղը կարիք ունի նվագարկիչի, ծայնասկավառակների, նույնիսկ դահլիճի աթոռների: Չնայած իշխանությունների խոստումներին, մասնաճյուղը չի ջեռուցվում: Քանի որ Ա. Սմբատյանը ՀՀ վարչապետին առընթեր մշակույթի խորհրդի համակարգողն է, նրան դիմեցին Գյումրիում գտնվող կոմպոզիտոր, Արմեն Տիգրանյանի տուն-թանգարանի շենքի անմխիթար վիճակի հարցով:

Հանդիպման ավարտին մասնաճյուղ այցելեց Հայաստանի վարչապետ Արմեն Դարբինյանը, որն այդ օրը գտնվում էր Գյումրիում: Նա բարձր գնահատեց Վլ. Սպիվակովի նվերը:

Արդեն երեկոյան, Գյումրիից վերադառնալուց հետո, իմացանք, որ Հայաստանի նախագահի հրամանագրով երկրաշարժի հետեւանքները վերացնելու, տուժածներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու եւ վերականգնողական աշխատանքների կազմակերպման գործում ներդրած մեծ ավանդի համար Վլ. Սպիվակովը պարգեւատրվել է Սուրբ Սեսրոպ Մաշտոցի օրանշանով: Նախագահ Ռոբերտ Քոչարյանն անձամբ գանգահարել է Փարիզ եւ շնորհավորել մեծ երաժշտին:

ՏԵՍՐԻՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԱՍՏՎԱԾԱՏՐԻՆ-ի թղթակից
«Ազգի» համար
Երեւան-Գյումրի

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՀՈԲԵԼՅԱՆ

Ռիտա Պողոսյանի 50-ամյակը

Հայաստանի սեղանի թենիսի դեկավարությունն ու ընտրանին նշեցին աշխարհի, Եվրոպայի ու Խորհրդային Միության նախկին չեմպիոնուհի Ռիտա Պողոսյանի 50-ամյակը: ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության սպորտվարչության դահլիճը ծաղիկներով էր զարդարված: այստեղ Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի նախաձեռնությամբ ճոխ հյուրասիրություն էր կազմակերպված ի պատիվ հայկական սպորտի փառքերից մեկի: հայ առաջին ու միակ սեղանի թենիսի աշխարհի չեմպիոնուհու:

Բազմաթիվ էին ելույթ ունեցողները: հոբելյարին շնորհավորեցին սեղանի թենիսի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Ասատրյանը, պետական մարզիչ ու երկար տարիներ Ռիտա Պողոսյանի մրցումների ընկերակից Ստեփան Բիշարյանը, ՀՀ վաստակավոր մարզիչ Վիգեն Ոսկանյանը, աշխարհի չեմպիոնուհու խաղընկերուհիներ, եվրոպայի չեմպիոնուհիներ Գոհար Խանգրեսյանն ու Յուլիետ Սանգասարյանն ու նաեւ երկար տարիների կյանքի ընկերը բռնցքամարտի մարզիչ Ստեփան Աթոյանը: 50-ամյա հոբելյարին ուղղված շնորհավորանքների հետ մեկտեղ ելույթ ունեցողները պատմեցին նաեւ այն փառավոր հաղթանակների մասին, որոնք Ռիտա Պողոսյանը տարել է աշխարհի շատ ու շատ երկրների մարզասրահներում: Դրանցից կարեւորագույնը

1969 թվականին Մյունխենում աշխարհի չեմպիոնուհու մեդալի նվաճումն էր: Պողոսյանը, Խորհրդային Միության հավաքականի աշխարհահռչակ «աստղեր» Զոյա Ռուդնովայի եւ Ալեքսանդրա Գրինբերգի հետ, հաղթող դարձավ թիմային առաջնությունում: արժանանալով Մարսել Կորբիյոնի գավաթին: Շատ կարեւոր էլ էր Ռիտա Պողոսյանի որոշումը Բաքվից տեղափոխվել Երեւան: Նրան հետեւեցին ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Յուրի Դազարյանը, հայկական ու խորհրդային ֆուտբոլի փառքերից Էդուարդ Սարգարովը, Ռուդիկ Ավանեսյանը եւ ուրիշներ: Նրանք իրենց մեծ փորձով ու վարպետությամբ մեծ ավանդ ներդրեցին հայկական սպորտում:

Այն իր իսկական «ոսկյա» ժամանակաշրջանն ապրեց 70-80-ական թվականներին նաեւ նրանց շնորհիվ: Իսկ սեղանի թենիսը դարձավ Հայաստանի «ամենաբերեռաս» մարզաձեւերից մեկը: շնորհիվ Գեղամ Վարդանյանի, Բագրատ Բուռնազյանի, Էլմիրա եւ Լարիսա Անտոնյան քույրերի, Ֆելիքս Սարգսյանի, Ֆելիքս Փիլոսյանի, Անիտա Զախարյանի, Էդուարդ Զաքարյանի, Աննա Պողոսյանի, Աննա Սակինյանի, Սամվել Վարդանյանի հաղթարշավների:

Շնորհավորելով Ռիտա Պողոսյանի 50-ամյակը մաղթում ենք քաջառողջություն ու վաստակաշատ երկար կյանք:

ՏԱՍՈՆ ՄՈՍԿՈՎՅԱՆ

Պայքարը կվերսկսվի գարնանը

Երեքշաբթի օրը անցկացվեցին ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության 1/8 փուլի պատասխան հանդիպումները, որոնցից հետո որոշվեցին այն թիմերը, որոնք կշարունակեն պայքարը: Հետաքրքիր է, որ հաջորդ փուլ մտած ութ թիմերը ընդամենը երեք երկրներ են ներկայացնում: Եկող տարվա գարնանը անցկացվելիք քառորդ եզրափակիչ խաղերում հանդես կգան Իսպանիայի երկու, Իտալիայի եւ Ֆրանսիայի երեքական թիմեր:

Ինչպես եւ երկու շաբաթ առաջ, լարված անցավ ֆրանսիական երկու թիմերի «Օլիմպիկի» եւ «Մոնակոյի» հանդիպումը: երբ առաջին խաղակեսում մրցավարը կոպիտ խաղի համար դաշտից հեռացրեց հյուրերի խաղացող Կոնյիչին, պարզ դարձավ, որ հաջորդ փուլ կմտնեն մարսելցիները: Ի վերջո այդպես էլ եղավ. 71-րդ րոպեին Կամարայի դիպուկ հարվածը հաղթանակ բերեց «Օլիմպիկին»:

Ֆրանսիական մեկ այլ թիմի «Բորդոյի» եւ օվեյցարական «Գրասհոպերսի» հանդիպման ժամանակ հաշիվը չբացվեց, սակայն դա ծեռնտու էր «Բորդոյին», քանի որ մրցակցի դաշտում նրանք 3-3 էին խաղացել:

Ի տարբերություն այդ խաղի, շատ արդյունավետ էր «Բրյուգե»-«Լիոն» մենամարտը: Այս խաղում 7 գոլ խփվեց, որոնցից 4-ը դաշտի տերերի դարպասը: «Լիոնը» մրցակցի նկատմամբ երկրորդ անգամ հաղթանակ տարավ եւ կշարունակի պայքարը:

Երբ Վիգոյում կայացած առաջին խաղում «Սելտան» հաղթեց «Լիվերպուլին», բոլորը կարծում էին, որ ամենից շատ Ֆրանսիայի հաշիվ էր գրանցվել, լրացուցիչ ժամանակ նշանակվեց: Այդ ընթացքում «Սելտիկոյի» խաղացողներ Սանտին եւ Խոսե Մարի Ռոմերոն եւս երկու գոլ խփեցին «Ռեալ Սոսյեդադի» դարպասը, եւ նրանց թիմը հաղթեց 4-1 հաշվով:

Մարսալան ոչ-ոքիով ավարտվեց «Յուրիխ»-«Ռոմա» հանդիպումը: երբ արդեն 14-րդ րոպեին իտալացի Մարկո դել Վեկիոն բացեց խաղի հաշիվը, իսկ որոշ ժամանակ անց նրանց դարպասապահը ետ մղեց 11 մետրանոց տուգանային հարվածը, թվաց, թե «Ռոման» հեշտությամբ հաջորդ փուլ կմտնի: Սակայն երկրորդ խաղակեսի միջնամասում օվեյցարական թիմի խաղացող Շոն Բարկլին երկու անգամ մրցակիցներին ստիպեց գնդակը հանել սեփական դարպասից: Թվում էր, թե մի ֆիշ էլ, եւ «Յուրիխը» կարող է նոր հաջողության հասնել: Սակայն ամեն ինչ իր տեղը դրեց «Ռոմայի» ավագ Ֆրանչեսկո Տոտտին, որը դիպուկ հարվածով հավասարեցրեց հաշիվը:

«Պարմա», որն այս մրցաշրջանում հաջող է հանդես գալիս, «Գլազգո Ռեյնջերսի» հետ հանդիպման առաջին կեսից հետո պարտվում էր 0-1 հաշվով (գոլը 29-րդ րոպեին խփել էր Ալբերտը): Սակայն նրանց «փրկեց» շոտլանդացիների խաղացող Պորտինին, որը 45-րդ րոպեին վտարվեց դաշտից երկրորդ նախազգուշացում ստանալու պատճառով: Թվական գերակշռություն ունենալով երկրորդ խաղակեսում իտալացիներ Բալբոն (47), Ֆերին (63) եւ Չիեզան (67, 11 մետրանոց տուգանային հարվածով) հաշիվը դարձրեցին 3-1, եւ նրանց թիմը քառորդ եզրափակիչին մասնակցելու իրավունք ստացավ:

Խաղում են «Լիվերպուլը» եւ «Սելտան»:

Օլիմպիկ (Ֆրանսիա)-Մոնակո (Ֆրանսիա)	1-0 (2-2)
Բորդո (Ֆրանսիա)-Գրասհոպերս (Շվեյցարիա)	0-0 (3-3)
Բրյուգե (Բելգիա)-**Լիոն (Ֆրանսիա)**	3-4 (0-1)
Բետիս (Իսպանիա)-**Բարսելոնա (Իսպանիա)**	1-0 (1-4)
Լիվերպուլ (Անգլիա)-**Սելտա (Իսպանիա)**	0-1 (1-3)
Սելտիկը (Իսպանիա)-Ռեալ Ս-դ. (Իսպանիա)	4-1 (1-2)
Յուրիխ (Շվեյցարիա)-**Ռոմա (Իտալիա)**	2-2 (0-1)
Պարմա (Իտալիա)-Գլազգո Ռեյնջերս (Շոտլանդիա)	3-1 (1-1)

ԹԵՆԻՍ

«Արծաթե սալաթամանը»՝ շվեդներին

Միլանում տեղի ունեցավ աշխարհի թիմային ոչ պատշաճական առաջնության Դեւիսի գավաթի խաղարկության եզրափակիչ մրցախաղը, որտեղ հանդիպեցին Իտալիայի եւ Շվեդիայի հավաքականները:

Երկրորդ տարին անընդմեջ պատվավոր մրցանակին՝ «Արծաթե սալաթամանին» տիրեցին Շվեդիայի թենիսիստները:

«Ասագո Ֆորում» մարզադահլիճում անցկացված մրցախաղը շատ դրամատիկ սկիզբ ունեցավ: Առաջին հանդիպման ժամանակ Անդրեա Գաուդենցիի եւ Մագնուս Նորմանի 5-ժամյա պայքարից հետո վճռական խաղափուլում հաշիվը 6-6 էր, երբ Իտալիայի հավաքականի առաջատար Գաուդենցին ուսի վնասվածքի պատճառով չկարողացավ շարունակել խաղը: Շվեդները վաստակեցին առաջին միավորը եւ պարզ դարձավ, որ նրանց մրցակիցները ոչինչ անել չեն կարող: Հաջորդ խաղում Մագնուս Գուստավսոնը հաղթեց Դավիդ Սանգինետիին, իսկ երբ զուգախաղում Յոնաս Բյորկմանը եւ Նիկլաս Կուլտին պարտության մատնեցին Դիեգո Նարգիսոյին եւ Դավիդ Սանգինետիին, հաշիվը դարձավ 3-0, եւ Շվեդիայի հավաքականը ժամանակից շուտ տոնեց հաղթանակը: Արդեն ոչինչ չորոշող վերջին երկու խաղերում թիմերը մեկական միավոր վաստակեցին: Մագնուս Գուստավսոնը պարտության մատնեց Ջանլուկա Պոցիին, իսկ Դիեգո Նարգիսոն Մագնուս Նորմանին: Սա իտալացիների միակ հաղթանակն էր, եւ Շվեդիայի հավաքականը մրցախաղը շահեց 4-1 հաշվով: Սա սկանդինավցիների արդեն 7-րդ հաջողությունն է Դեւիսի գավաթի խաղարկություններում: Շվեդները հաստատես հաջող են հանդես գալիս վերջին տարիներին:

Շատերը դա իրավացիորեն կապում են թիմի ավագ կապ Մատս Վիլանդերի անվան հետ: Նա կարողացել է համախմբել երկրի ուժեղագույն թենիսիստներին, որոնցից ոչ մեկը չի խուսափում Դեւիսի գավաթի խաղարկությունում հանդես գալուց: Շատերն են նկատել, որ երկրի հավաքականի անդամները, որոնք տվյալ մրցախաղին չեն մասնակցում, այնուամենայնիվ, մրցավայրում են լինում եւ աջակցում թիմակիցներին: Նշենք նաեւ, որ եզրափակիչ մրցախաղին վնասվածքների պատճառով մասնակցել չկարողացան շվեդների երկու ուժեղագույնները՝ Թոմաս Յուհանսոնը (նա աշխարհի 17-րդ թենիսիստն է) եւ Թոմաս Էնքվիստը (22): եվ Միլանի եզրափակիչը պատմության մեջ մտավ իբրեւ միակը, որտեղ հանդես չէր գալիս համաշխարհային դասակարգման երեսունյակից եւ ոչ մի խաղացող:

Իսպանիայում ավանդական հանդիպում անցկացվեց, որը նպատակ ուներ որոշելու երկրի ուժեղագույնին: Այդ կոչումը վիճարկեցին Ալեխ Կորեսխան եւ Կարլոս Մոյան: Սա կարծես թե վերջերս Հանովերում անցկացված աշխարհի առաջնության եզրափակիչի կրկնությունը լիներ: Կրկին հաղթեց Կորեսխան. հաշիվն է 6-7, 7-5, 6-4:

Չեխիայի Բոնո քաղաքում անցկացվեց ցուցադրական մրցաշար, որին մասնակցեցին չորս թենիսիստուհիներ: Մրցումներում հաղթեց Յանա Նովոտնան (Չեխիա), որը նախ կիսաեզրափակիչում առավելության հասավ Աննա Կուրնիկովայի (Ռուսաստան) նկատմամբ 6-4, 4-6, 6-3, ապա վճռական խաղում պարտության մատնեց Հենրիետա Նազիովային (Սլովակիա) 6-3, 6-3:

ՊԵՂԱՍՍԱՔԻ

Առջեւում եզրափակիչն է

Ճապոնական Սապորո քաղաքում անցկացվեց գեղասահքի համաշխարհային «Մեծ մրցանակ» շարքի վերջին վեցերորդ փուլը:

Ինչպես եւ նախորդ մրցաշարերում, զուգասահքերում հիանալի հանդես եկան ռուսաստանցիներ Ելենա Բերեժնայան եւ Անտոն Սիխարուլիձեն: Նրանք երրորդ անգամ շահեցին գլխավոր մրցանակը՝ 30 հազար դոլար պարգեւավճարը: Մրցակիցները զգալիորեն զիջում են այս երիտասարդ զեղասահորդներին:

Պարային զույգերի մրցումներում հաղթող դարձան Մարինա Անիսինան եւ Գվենդալ Պեյզերան (Ֆրանսիա): Սուր պայքարում նրանք առաջ անցան Իրինա Լոբաչովա-Իլյա Ավերբուխ ռուսական երկյակից:

Փայլուն ելույթ ունեցավ 16-ամյա ռուսաստանցի Եվգենի Պլյուշենկոն: Նա շատ բարդ ծրագրով հանդես եկավ եւ մեծ առավելությամբ հաղթեց տղամարդկանց մենասահքերում: երկրորդ մրցանակակիր դարձավ օլիմպիական չեմպիոն Էլվիս Ստոյկոն (Կանադա):

Կանանց մենասահքերում անակնկալ էր 25-ամյա Տատյանա Մալինինայի հաղթանակը: Ուզբեկստանի ներկայացուցիչը մինչ այդ խոշոր նվաճումներ չուներ, բայց այստեղ հաջող հանդես եկավ: Նա ետեւում թողեց այնպիսի ուժեղ զեղասահորդուհու, ինչպիսին ռուսաստանցի Իրինա Սլուցկայան է:

Այժմ բոլոր վեց փուլերի գումարով առավել հաջող հանդես եկած մարզիկները գարնանը կմասնակցեն Սանկտ Պետերբուրգում կայանալիք եզրափակիչ մրցումներին: Ինչպես եւ սպասվում էր, այդտեղ առավել մեծ թվով մասնակիցներ կունենան Ռուսաստանի ներկայացուցիչները:

ԲԱՂՄՐԵՏՈՒ

Ֆեդերացիան կգլխավորի Անտոպովը

Ռուսաստանի բաղմինտոնի ֆեդերացիայի նախագահի պատշաճում ընտրվել է հանրահայտ մարզիկ Անդրեյ Անտոպովը: Օմսկցի բաղմինտոնիստը երկար տարիներ եվրոպայի ուժեղագույն խաղացողներից էր, իսկ վերջին շրջանում հիմնականում զուգախաղերին էր մասնակցում:

Անտոպովը փոխարինել է նախկին նախագահ Լիֆշիցին, որը մեղադրվում է ֆինանսական չարաշահումների մեջ: Անտոպովը վստահ է իր ուժերին: Նա մտադիր է փակել ֆեդերացիայի ունեցած նախկին պարտքերը (մոտավորապես 60 հազար դոլար), վերադարձնել մարզաձեւի նկատմամբ երկրում եղած նախկին հետաքրքրությունը: Նոր նախագահը որոշել է նաեւ վերականգնել «Ռաշն օփեն» ավանդաբար անցկացվող մրցաշարերը:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՖԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՕՐՎԱ ԽԵՍՏԵՄՈՎ

ԱՐՁԱԳԱՆՔ

Պաշտոնական Թեհրանը վրդովմունք է հայտնել Նախիջևանի հայկական խաչքարերի ավերման առնչությամբ

Ադրբեջանական կողմը հերքում է այդ հուշարձանների գոյության փաստն իսկ

ԵՐԵՎԱՆ, 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՍՄԲ. Պաշտոնական Թեհրանը վրդովված է Ադրբեջանի Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում գտնվող հայկական գերեզմանատների ավերման առնչությամբ: Այսօր այդ մասին ՍՍՄԳ գործակալությանը հայտնեցին Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատանը. նշելով, որ Նախիջևանում ԻԻՀ ներկայացուցիչն այդ կապակցությամբ արդեն իր բողոքն է հայտնել Նախիջևանի իշխանություններին: Միևնույն ժամանակ Երևանում Իրանի դեսպանատանը նշեցին, թե «ամենայն հավանականությամբ այդ բարբարոսության մեջ հրեաների մաս էլ խաղն է»:

Մինչդեռ Բաքվում ԼՌՀ ժողովական ներկայացուցիչ Հասան Ղեյնալովը լրագրողներին հայտարարել է, որ Նախիջևանում հայկական գերեզմանատների և հայ հիսոնական ճարտարապետական հուշարձանների, մասնավորապես, խաչքարերի ավերման մասին տարածվող հաղորդումները «հայերի հերթական կեղտոտ հերյուրանքն են»: Ղեյնալովի պնդմամբ, «Նախիջևանում, որը հնագույն ժամանակներից Ադրբեջանի հողն է, երբեմն հայեր չեն ապրել, ուստի այնտեղ ոչ մի հայկական հուշարձան չի եղել և չկա»:

Ղեյնալովը վրդովմունք է հայտնել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղար Ֆեդերիկո Մայորին ուղղած նամակի առնչությամբ, որում վերջինս խնդրում է կանխել Ադրբեջանի իշխանությունների կողմից հայկական մշակույթի հուշարձանների ոչնչացումը: Դայաստանին և հայկական սփյուռքին մեղադրելով «կեղտոտ քարոզչություն» վարելու մեջ, Ղեյնալովը տարակուսանք է հայտնել, թե «ինչու է աշխարհը հավատում հայերին, այլ ոչ թե ադրբեջանցիներին»:

Միևնույն ժամանակ Ադրբեջանի նախագահի աշխատակազմում հայտարարել են, որ բոլոր իրենց Նախիջևանից տեղեկություններ լուսնն, ադրբեջանական դեկավարությունը հաստատված է, «որ վանդալիզմը խորթ է ադրբեջանական ժողովրդի հոգեկան ենարարին»: Ի հաստատումն այդ խոսքերի Հեյդար Ալիևի աշխատակազմի ներկայացուցիչը նշել է «ներկայումս Ադրբեջանում 20 հազար հայ կանանց խաղաղ բնակության փաստը»:

Անդրադառնալով Բաքվի հայկական եկեղեցական հանգիստի հնչեցած ճանաչագրին, որն ավերումից փրկվել է միայն միջազգային հանրության, մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջամտության շնորհիվ, Ադրբեջանի դեկավարի աշխատակազմում հաղորդել են, որ, ամենայն հավանականությամբ, «հայկական եկեղեցին կվերածվի դրամենդակի, հնարավոր է՝ որպես կամ բանգարանային բնույթի»:

Արաֆաթը Երուսաղեմն իրեն չվերադարձնողներին առաջարկում է ջուր խմել... Մեռյալ ծովից

ԵՐԵՎԱՆ, 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԲՏԱՏՍՍՍ. Պաղեստինյան ինքնավարության դեկավար Յասեր Արաֆաթը հավաստել է ծոց ադարգայում Երուսաղեմ մայրաքաղաքով պաղեստինյան անկախ պետության ստեղծումը հոյակերտ վճռականությունը:

Այսօր Ֆերոնում ելույթ ունենալով պաղեստինյան «ինտիֆադայի» (հարձակման) օկուպացիայի դեմ զանգվածային ելույթների սկզբան 11-րդ տարեդարձի առթիվ կայացած զանգվածային հանդեսահավաքում, Արաֆաթը հայտարարել է. «Մենք կհոչակենք պաղեստինյան պետություն: Ես ասում եմ, որ նրա մայրաքաղաքը կլինի Երուսաղեմը, դուք է գալիս դա, թե ոչ Իսրայելի վարչապետ Նաթանյահուին: Սոս է այն օրը, երբ մենք բոլորս կաղոթենք Երուսաղեմում: Մենք սանձիմեսրը սանձիմեսրի հետևից ազատագրելու ենք մեր հողերը և քարը քարին դնելով, կառուցելու ենք մեր հայրենիքը: Իսկ ում դա դուր չի գալիս, թող ջուր խմի Մեռյալ ծովից», ընդգծել է պաղեստինյան դեկավարը:

Քաղաքական բազմաթիվ դիտորդների գնահատականներով, Պաղեստինյան ազգային վարչակազմի դեկավարը վերջին անտեսել է Նաթանյահուի բազմիցս արած նախազգուշացումները, որ Իսրայելը կիրաժարվի Ուայ Փլանթեյշենի համաձայնագրի հետագա իրագործումից, եթե Արաֆաթը և պաղեստինյան մյուս դեկավարները չդադարեն հանդես գալ նման հայտարարություններով:

ԱԶԳ-ՈՒՄ ՁԵՐ ԳՈՎԱԶԴԸ ԽԱՉՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է

ԳԱՂԱՐՔԵ

Ամանորյա աննախադեպ գեղջեր

529353

ԵՎ ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼԸ ԿԱՅԾԵԼԻ ՁԵՋ

ԱՐՄԵՆՊՐԵՍԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1999 թվականի համար Արմենպրես պետական փակ բաժանորդագրություն առաջարկում է.

- Տարաբնույթ նորությունների ժապավենները՝ **հանրապետական, միջազգային, տարածաշրջանային** (հայերեն և ռուսերեն):
- **Armenpress Bulletin** նորությունների ժապավեն անգլերեն:
- **Մասնագիտացված տնտեսական ժապավեն**՝ հանրապետական և միջազգային (հայերեն, անգլերեն ու ռուսերեն):
- **Հանրապետական մամուլի ամենօրյա տեսություն** (հայերեն և անգլերեն):
- **Ֆոտոծառայություններ**՝ հանրապետական ֆոտոնորություններ, Ռոբերտ Համբարձումյանի գործակցության ֆոտոնորություններ, Արմենուհի տարեկան ֆոտոտեղեկատվությամբ լազերային սկավառակներ, այլ ֆոտոծառայություններ:
- **Գովազդային ծառայություններ**՝ արտանյալ ոլորտներում գովազդի գեղեցիկ զանգվածային լրատվամիջոցներում, ներառյալ Ինտերնետը, գովազդային տեղեկագրերի, ծալազրքույկների ստեղծում:
- **Համակարգչային զանազան ծառայություններ**, ներառյալ էլեկտրոնային փոստով հաղորդումների ուղարկումն ու ընդունումը:
- **Համաժիտանի մամլո սրահ**՝ հանդերձված մամլո ասուլիսների, հանդիպումների, սեմինարների և այլնի անցկացման համար:
- **Լրատվության բնագավառի այլ ծառայություններ**՝ պատվիրատուի ցանկությամբ:

Գործում է զեղչերի ճկուն համակարգ

Մեր հասցեն է. Երևան, Իսահակյան 28,
հեռ. 528460, 526702,
ֆաքս (3742) 151738, (8852) 525789
E-mail: contact@armenpress.am, apnews@armenpress.am

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԳԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայկական մասնաճյուղ (ԲՀԻՕՀՀՄ)

ԲՀԻՕՀՀՄ-ն Հայաստանի քաղաքացիներից ընդունում է դիմումներ OSI/FCO CHEVENING/LSE 1999-2000 կրթաթոշակի մրցույթի համար: Կրթաթոշակը տրամադրվում է Լոնդոնի տնտեսագիտության դպրոցում (ԼՏԴ) 1 տարվա ուսման համար մագիստրոսի կոչում ստանալու նպատակով: Ծրագիրը ֆինանսավորվում է Բաց հասարակության ինստիտուտի, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության և ԼՏԴ-ի կողմից: Կրթաթոշակն ապահովվում է ուսման վարձը, ճանապարհածախսը և 2 ամիսների ընթացքում ապրելու վարձը:

Դիմողները պետք է լինեն.
35 տարեկանից ոչ բարձր,
ունենան բացառիկ ակադեմիական որակավորում (ներառյալ բարձրագույն կրթությունը),
անգլերենի գերազանց իմացություն:
Դիմումները ընդունվում են մինչև 1999 թվականի հունվարի 8-ը:

Դիմումների և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել.
Երևան, Այգեձոր 53բ, հեռ. 27-21-19, 27-17-13:

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՑԱԿ

ՇԲ

17.00 Հաղորդ
17.20 Սուլֆիկներ «Լանթանոիդների ատոմները», «Գեղացած ոլորտը», «Միաբաղ ու ատեղ», «Սուպերքրան հուսալությունը»
19.00 Հեռատատրեղ «Դաղստան»
19.00 Խոսք ասելիք
19.15 Վարդ և տոնմիկ
19.35 Գարնանային ժամերգ
20.00 Հաղորդ
20.30 Լրատ
20.45 Սնունդ և մեծ
20.55 Հեռատատրեղ «Դանդաղատարմեր»
21.30 Դիզելային
22.05 Գ/Ֆ «Մահացու վտանգավոր ոլորտ ֆիլմը»
24.00 Հաղորդ
00.15 «Բաց տարածության գեղեցկության գիծ»

ՆՈՐՔ

19.00 Լուրեր
19.10 Սուլֆիկներ
19.20 Սեմի և Կենդանիները
19.40 Միասին և Միայն
20.25 Գիտակ
20.45 Դասական հուսալության ընտրանի
21.00 Լուրեր
21.25 Մեկնիր հուսալ են
21.30 Սերիալ «Ոսկեղջյուր ուսիկանության» (23-րդ մաս)
22.15 Սիրելի գնդակաձև
22.20 «Ոսկեղջյուր» և նրանց» ստուդիան
23.00 Լուրեր
23.15 Գեղեցիկ «Կինը. ոչնչ նա սիրում էր»

ԿԹ

19.05 Մանուկի տարեմուտ
19.15 Հաղորդ
19.30 Ռուսերեն
19.45 Գ/Ֆ «Ռուսաստան» (14-իկ բաժին)
21.15 Մեքենա Լեռն Սկզբանը Ներկայաց նաև 1 «Գիրուզ» մուսիկիզ
21.30 Սերիալ

ՇԲ

22.00 Հաղորդ
22.15 Բարով
22.30 Մանուկի տարեմուտ
22.40 Դանձների կողին կամ ինչպես տնամեջ մեկ Սեզիան
22.50 Կամ. կամ Գրքնությունը
23.30 Տարեմուտ
00.00 Միջազգային կինոտարի «Տերմինատոր 2» մարտական
02.05 Տարեմուտ

ԿԹ

7.00 Բարի լույս
10.00, 16.00, 19.00, 00.45 Նորություններ
10.15 Սերիալ «Դանան հրեանը»
11.30 15.45 Միգնես TV
16.15 Սերիալ «Սինդարի նոր արկածները»
16.50 Հրաշքի ընտրությունը
17.05 Խեղճ կամավ և տրամաբանի
17.35 Սինդի 16 տարեկան և ավելի
18.00 «Դանան հրեանը»
19.15 Այդ գիտաճի կինոնկարները
19.45 Սյուզեր և հիմա
20.05 Ռոմեսի հիշեն
20.45 Սերիալ «Փոքրիկ լարերի փոքր. 2»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 մանանան
22.50 Գ/Ֆ «Մենդելսոնի բաղադիմ»
00.15 Վան դեմիլիել «Սենդրի Գուդիլի սիրոյը կամ խզելով Մոսկվայի հեռ.»
01.00 Հաղորդ տան
01.35 Գ/Ֆ «Բարսելոն»

ՌՏՎ

8.00, 10.30, 10.50 Բարի լույս, Ռուսաստան
10.15 Հերթապահ բանաստեղծ
10.35 Հեռատատրեղ «Հաղորդումների ծրագիր»
10.55 Սպորտներ փոսով
11.00 «Մանրամասն Բարբարա»
11.45 Հուսալության, հուսալության
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր
12.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիքներ»
13.30 Երկիրագրության կինոնկարների մասին
14.30 «Հանգոյց բարձրի վրա»
14.55 Սնեսարի գույնի խանութ
15.35 Սերիալ «Կինը»
16.20 Հեռատատրեղ «Դարասկզբի ու ներկայիները»
17.15 «Ձեզ հարցնում հանձնվել»
17.30 Սերիալ «Առաջին հանդիպումներ»
18.35 Սեսարան
19.00 Դանդաղարկի
19.20 Մանրադրամյան ֆիլմ «Լանթենի մի միայի կամքն ու մանը» (1-ին մաս)
20.30 Հերթապահ բանաստեղծ
20.35 «Մի իրադարձության պատմությունն»
21.35 Մանրամասներ
21.45 «Երկու դարաշրջան»
22.30 Հեռատատրեղ «Վերջին դարը»
23.00 Սերիալ «Սոլ Ֆլենդրոս. նոր ուսանողները ու վերջը»
23.55 Սերիալ «Վերջինները»
00.45 Հերթապահ բանաստեղծ

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՑԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՊՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) • տեղեկագրերով • մագնիսական սկավառակներով • INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Ֆրդրան Մեն» հրատարակչության տպարան, Երևան 23, Աբովյանյան 2. Պատվերների թիվ 65. Դասակ 69119. Պատվեր 962. Տպաքանակը 4000. Ստորագրված է տպագրության 9. 12. 1998. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@